

**ԱՆՈՒՇԱՎԱԵԱՌ
ՍԱՐԳԻՍ**

*Solankhian orberno
խրախճանքի ձեր սեղանները
ճոխացուցեք
համեղ անուշեղեններով*

**ԱՐԱՐՍ ՓՈՂՈՑ
ՊՈՒՐԵ ԲԱՍՈՒՏ ԲԵՌ. 261475**

ԱԶԳԱԿ

ԱՌՐԱԹԵՐԹ

AZTAG QUOTIDIEN POLITIQUE ET LITTÉRAIRE *أزتاك حداثتيه سياسية وأدبية. اليوم الثور، إزتاك وشيكان*

1500 Լ.Ո. 76Գ4 ՏԱՐԻ, ԹԻԻ 233 (21575) ՉՈՐԵՔՇԱՐԹԻ, 24 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2003 10 ԷՁ

**ՄԵՐ
ԸՆԹԵՐՅՈՂՆԵՐՈՒՆ**

Կաթողիկե Ս. Ծննդեան տօնին առիթով, եւ համաձայն մամուլի սեփական իրողությունից, «Ազգակ» լոյս պիտի չտեսնէ Հինգշաբթի 25 եւ Ուրբաթ 26 Դեկտեմբերին:
Մեր յաջորդ թիւը՝ Շաբաթ 27 Դեկտեմբերին:

ՀԱՅԿԱԿԱՆ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ
ՃԱՆԱՉՄԱՆ ԳԾՈՎ

**ԹՈՒՐԲԻՈՅ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ
ԿԸ ԴԱՏԱՊԱՐՏԷ ԶՈՒԻՑԵՐԻՈՅ
ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ**

Թրքական «Անատոլիո» լրատու գործակալությունը հաղորդեց, թէ Չուիցերիոյ խորհրդարանին կողմէ Հայկական Յեղասպանության ճանաչման օրինագիծին ընդունման իբրեւ պատասխան, Թուրքիոյ խորհրդարանին մեծամասնությունը կազմին՝ հիշատական Արդարության եւ Բարգաւաճման, ինչպէս նաեւ ընդդիմաբան ժողովրդականացման օրինագիծին կուսակցությունները խորհրդարանական խմբակցությունները ընդունած են միացեալ յայտարարություն մը, ուր նշուած է. «Խորհրդարանները պէտք է խուսափին մշակութային միջեւ բախումներ ստեղծելու ջանքերէն շրջանակներու ձգտումներուն ծառայելէ: Միջպագային տարաբնույթի ղեկավարները պարզապէս համարձակութիւն եւ համագործակցութիւն ցուցաբերելու այս պայտու ժամանակաշրջանին ընդունուած սխալ որոշումը մենք կը նկատենք պարզեւտարում՝ մեծ մասամբ անմեղ մարդոց կեանքը խլած եւ Չուիցերիոյ կողքին շատ մը երկիրներու շահերը թիրախ դարձուցած հայկական ցեղապաշտական տարաբնույթի: Յայտարարութիւնը կ'ընդգծէ, թէ «թուրք սպառնալից ժողովրդագրութեան պարզապէս վշտացուցած» այս որոշման վերջին տարիներուն բազմաթիւ մարտերէ ներս դրական պարագայում արձանագրած թուրք-պուրիցերիական յարաբերութիւններուն վրայ ունենալիք ծիսական հետեւանքներուն պատասխանատուութիւնը կը կրէ Զուիցերիոյ խորհրդարանը:

«Թուրքիոյ խորհրդարանը անընդունելի կը նկատէ եւ կը դատապարտէ Չուիցերիոյ խորհրդարանին կողմէ ընդունուած, պատմական փաստերը չարամտօրէն խեղաթուրման նպատակով այս սխալ եւ միակողմանի որոշումը», շեշտած է Թուրքիոյ խորհրդարանական ուժերու միացեալ հաղորդագրութիւնը, աւելցնելով, որ որոշումը չի նպաստեր «շրջանի կայունութեան ու խաղաղութեան, ինչպէս նաեւ հայ եւ թուրք ժողովուրդներու բարեկամութեան»:

ԱՐՊԵՅՃԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ ԵՄ...

Արպեյճանի խորհրդարանը իր կարգին երէկ ընդունեց յայտարարություն մը, ուր դատապարտած է Չուիցերիոյ խորհրդարանին կողմէ Հայկական Յեղասպանության ընդունումը, պայն նկատելով այլ երկրի մը ներքին գործերուն միջամուխ ըլլալու փորձ:

«Աստուծոյ սէրը մեզի հանդէպ յայտնուեցաւ, երբ Աստուած իր Միածին Որդին աշխարհ դրկեց, որ կեանք պարգեւէ մեզի»:

Սիրեցեալ պատկերի Քրիստոս, Ծննդեան տօնը ամէն տարի ուրախութիւն կը ստէ մեր ընտանիքներուն, մասնաւոր մեր մանուկներու սրտերուն մէջ: Միածին Որդին մարդացաւ, որպէսզի Աստուած շոշափէի դառնայ մարդոց, որպէսզի մեզի հետ մնայ միշտ, որովհետեւ մենք «Ընտանիքի, սպիանք» Աստուած մեզի հետ:

Այս տարուան Կաթողիկէ պատրիարքներու համաժողովը անդրադարձաւ մասնաւորապէս ընտանիքին: Յիսուս ծնաւ ընտանիքի մը մէջ՝ շրջապատուած Սուրբ Կոյն Մարիամի եւ Սուրբ Հայր Յովսէփի: Նապարէթի ընտանիքը տիպար օրինակ կը հանդիսանայ բոլոր ընտանիքներու հօր, մօր, ինչպէս նաեւ ամէն պատկեր: Ծառիկէն է խորհրդածութիւն կատարել Սուրբ Ընտանիքին մասին, որ պարզեցաւ պարզութեան մէջ, համեմատութեամբ, խոնարհութեամբ եւ Աստուծոյ գոհարանութեամբ: Եթէ ըսենք, որ ընտանիքին փրկութիւնը ընտանիքին է, այդ փրկութիւնը պիտի գայ յատկապէս Սուրբ Ընտանիքի տիպար օրինակին հետեւ: ող ընտանիքներէն:

Ընտանիքը պարտի ըլլալ: սիրոյ սրբավայր, ամուսնական սիրոյ բոյն՝ հօր ու մօր սիրոյ, պաշտի սիրոյ եւ եղբայրական սիրոյ օճախ: Արդեօք այսպիսի անկեղծ սէր մը կարելի է գտնել այսօր մեր հասարակութեան մէջ: Մարդիկ արդեօք կը հաւատան յանրապետական աշխարհին: Այո՛, կը հաւատանք թէ այս մակարդակով սէրը կարելի է: Մենք կը հաւատանք, որ աստուածային սէրը կ'ընայ կերպարանափոխել մարդկային սէրը եւ պայն բիրեղացնել: Քրիստոնէական ընտանիքը, որ հաստատուած է Աստուծոյ սիրոյ վրայ, որ մարդացաւ Յիսուսի անձին մէջ, այս ընտանիքը կառուցուած է անխախտ ծայրի վրայ: Այսպիսի հիմ մը քրիստոնէական ամուսնութիւնը անքակտելի կ'ընէ եւ անուսնակէ կը դարձնէ: Քրիստոնէական ամուսնութիւնը ինքն իրմով անքակտելի չէ, եւ հակառակ օրինակներ կան դժբախտաբար մեր շուրջ: Անքակտելի է այն ընտանիքը, որ հիմնուած է հաւատքին, Աստուծոյ հոգիին եւ սուրբ խորհուրդներուն վրայ՝ յաճախակի խոստովանանքի եւ Ս. հաղորդութեան վրայ:

Սուրբ Եկեղեցին կոչուած է ընտանիքին ծառայելու՝ օրինակ առնելով Յիսուսը, որ ըսաւ. «Մարդիկ Որդին չեկաւ ծառայութիւն ընդունելու՝ այլ ծառայելու» (Մտք. Ի. 28): Մենք այլ կ'աշխատինք կանոնաւոր այցելութիւններով եւ պանապան հանդիպումներով ամէն ձեւով օրինակներ կանգնելու մեր ընտանիքներուն, մասնաւոր անոնց, որոնք լքուած են, առանձնութեան կը տառապին, եւ կամ բարոյական ու նիւթական դժուարութեան մէջ կը գտնուին: Հայրաբար կը յորդորենք պանոյք, որ հաւատարիմ մնան Քրիստոսի, հաւատարիմ մնան իրենց ժողովուրդին յուսարեան հաւատքին, մեր պայտերու ընտանեկան սրբութիւններուն:

Այն ընտանիքները, որ եկեղեցոյ մօտ են եւ հոգով սրտով կ'աշխատակցին ժողովրդագրութեան հետ պանապան հովուական գործունէութիւններուն մէջ, անոնք այլ հոգեւոր օգուտ մը չեն ստանալ: Որովհետեւ մարդը տարով կը ծոխանայ եւ կը բարձրանայ, իսկ սիրելով՝ աւելի վեհանման կը դառնայ: Անընդհատ կերպով սիրելով մեծ քաջութիւն կը պահանջէ: Անոնք քաջութեան՝ սէրը կը ցամաք ու ապարդիւն կը մնայ: Մեծագին կը գնահատենք այդ եկեղեցեացի ընտանիքներուն ծառայութիւնները եւ կը քաջախեղքեցնենք անոնց նորից:

Բազմաթիւ բարիքներ կը կատարուին յոյսութեան մէջ՝ հաւատքով եւ նուիրումով ապրող այր եւ կին մարդոց կողմէ: Սուրբ Յովհաննէս իր Աւետարանին առջին էջին մէջ կը գրէ. «Լոյսը կը յուսարի յաւաքին մէջ, բայց յաւաքը չիստաւ Անոր» (Ս. 1) եւ այլ տեղ Յիսուս կ'ըսէ. «Ես եւ աշխարհի Լոյսը. ով որ իմ ետեւն է գալ՝ յաւաքի մէջ պիտի չբայտէ» (Ը. 12):

Յիսուս ուղեց ծնիլ ընտանիքի մը մէջ, որպէսզի արքայն էր ընտանիքները: Որքան որ ծանր է յուր ըլլալն ընտանիքին հարցերն ու դժուարութիւնները եւ անոնց յուսումը մտք յուսահատելու չէ, որովհետեւ անոնք կը յաղթէ Լոյսը՝ Յիսուս որ յուսարեց աշխարհը: Յիսուս չ'ուղեց ծնիլ պայտի մը մէջ, այլ նախընտրեց համեմատ ընտանիք մը, աղքատիկ մտր մը, նախընտրեց խոնարհութիւնը, որպէսզի մեզի խոնարհութեան օրինակ դառնայ, ոչ միայն իսուրով, այլ մասնաւոր գործով:

Յիսուս աշխարհ եկաւ, որպէսզի աստուածային սիրոյ կրակը վառէ ընտանիքին եւ ամբողջ աշխարհին մէջ, եւ այս կրակը անշեջ պիտի մնայ հակառակ բոլոր ծիսական անցուցարարներուն: «Սիրոյ քո հոտ արկեալ յերկիր, բորբոքեցի ի հոգիս մեր», կ'ըսէ մեր շարականը:

Կաթողիկէ պատրիարքներու համաժողովին բնարանն էր «Ընտանիքը՝ պետութեան եւ եկեղեցոյ պատասխանատուութիւնն է»: Ուստի պետութեան իշխանաւորներն այլ պարտին կարեւորութիւն ընծայել ընտանիքին եւ պաշտպանել պայն, պարտին նկատի առնել ընտանիքներուն դժուարութիւնները եւ անոնց յուսումը հայրաբար գործնական միջոցառումներով, հետո՛ւ անմասնաւոր շահերէ եւ մարդկային հաշիւներէ:

Որո՞նք են այսօր ընտանիքի մը ծանր հարցերը: Անոնք ցանկը կրնայ երկարիլ: Բաւ է իրել կարեւորագոյնը՝ տնտեսական տագնապը, որ յառաջ բերաւ աղքատութեան տարածումը, անգործութեան ան, երիտասարդ ուժերու շարունակական գաղթը, ամուսնութիւններու նուազումը, փտածութիւնը, գողութիւնը, բարոյական ընդհանուր անկումը, սեռային շեղումները, եւ ամէնէն աւելին՝ յուսահատութիւնը:

Ամբողջ իսուրքը ըսել չի բաւեր եւ տրուած խոստումներուն վրայ վստահութիւն չմնայ: Պէտք է կազմակերպուած աշխատանք տանիլ ընտանիքին պահանջները ապահովելու համար եւ անոր սրբութիւնները պահպանելու: Բշխման ընդունումը պատիւէ աւելի պատասխանատուութիւն մըն է, եւ ամէն ոք օր մը հաշիւը պիտի տայ իր գործերուն:

Այս իրականութիւններուն դիմաց, ամենապատիւ պատրիարքները հետեւեալ որոշումներ առին.

- 1. Մշակել հովուական ծրագիր մը յատուկ կերպով ընտանիքներու հոգեւոր պարգսման համար, որ կը միտի ընտանիքներու սրբութեան:
- 2. Ամուսնութեան պատրաստուողներուն համար յուր յարմարացք մը ծրագրել, որպէսզի գիտանան իրենց նոր վիճակը դիմագրաւել առողջ սկզբունքներու վրայ:
- 3. Հետեւել տրակապման եւ դժուարութեան մէջ գտնուող զոյգերուն, որպէսզի բոլոր կազմութիւններուն մէջ անոնք կարենան որդեգրել քրիստոնէական դիրքորոշում մը՝ հիմնուած Ս. Աւետարանին վրայ:
- 4. Պատրաստել ընտանեկան հարցերու հայոց մասնագէտներ՝ համագործակցելով համայնարաններու ուսուցիչներուն հետ:

Ընտանիքը այսօր փրատուեալ մօր կը նմանի, պայն պէտք է ինձմել, որպէսզի բարեբի ընկերութիւնը, որպէսզի կատարուի Աստուծոյ ծրագիրը, որ է մարդուն փրկութիւնը եւ երջանկութիւնը՝ մարդացեալ Յիսուսի միջոցաւ: Որովհետեւ բարեպաշտ ընտանիքներուն մէջ է, որ կը պատրաստուին ապագայ յանձնարու երիտասարդ երիտասարդները, ապագային կորով եւ համուզում ունեցող գործուն տարրերը, բայց մասնաւոր բախանալական եւ կրօնաւորական կոչումները եւ ապագայի սուրբերը:

Բարեպաշտ ընտանիքներուն մէջն է, որ պատկերներ կը մեծան ու կը պարգանան իմաստութեամբ, հասակով եւ շնորհով՝ Աստուծոյ եւ մարդոց սրբի: (տես Դ. Բ. 52):

Այս սուրբ տօններուն օրերուն, սեւեռներ մեր աչքերը նայարէթի Ընտանիքին վրայ եւ խնդրենք իրմէ, որ պահէ, պաշտպանէ եւ յուսարեց մեր բոլոր ընտանիքներուն անդամները, մասնաւոր ղեռնատի երիտասարդները եւ պատանիները:

Այս տօնական օրերուն, հայցենք հաղաղութեան Արքային, որ շնորհէ իր յաղաղութիւնը Միջին Արեւելի տառապանքի երկիրներուն, մասնաւոր մեր սիրելի Լիբանանի ժողովուրդին, եւ յատկապէս՝ Հայաստանի ու Արցախի մեր եղբայրներուն եւ քոյրերուն:

Սուրբ Հայր Յովսէփ, պաշտպան եղի՛ր մեր ընտանիքներուն:

G. AYANIAN & SONS

MERRY CHRISTMAS

We Light up LEBANON

Since 1928

Dora: 01/255222 / 3 / 4 / 5
Gemma: 01/447000 - 01/447940
Fax: 01/265187 - 01/582357
Cell: 03/627728 / 9
www.ayanian.com

**ՎԱՀԱՆ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ
ՏԵՍԱԿՅԵՑԱԻ ԵԳԻՊՏՈՍԻ
ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀԻՆ ՀԵՏ**

Հայաստանի Ազգային Ժողովի փոխնախագահ ընկ. Վահան Յովհաննիսեան Գաղիբէի մէջ հանդիպում ունեցաւ Եգիպտոսի Ազգային Ժողովի նախագահ Յաթի Սորուրիի հետ, որուն փոխանցեց Հայաստան այցելելու իրաւէր մը:

Հանդիպումին ընթացքին կարելորկատուած է երկու երկիրներուն միջեւ խորհրդարանական յարաբերութիւններու աշխուժացումն ու ամրապնդումը: Եգիպտոսի խորհրդարանին մէջ սկսած են աշխատանքները հայ-եգիպտական բարեկամութեան խումբի ստեղծման, որ գործակցութեան պիտի ձեռնարկէ Հայաստանի Ազգային Ժողովի նոյնանման խումբին հետ:

**ՓՈՒԹԻՆ - ԲՈՂԱՐԵԱՆ
ՇՆՈԱԶԱՅՆԱՅԻՆ
ՇԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԻՒՆ**

Ռուսիոյ նախագահի մամուլի ծառայութիւնը հաղորդեց, որ Ռուսիոյ եւ Հայաստանի նախագահներ Վլատիմիր Փութին եւ Տոպէրը Քոչարեան ունեցած են հեռաձայնային հաղորդակցութիւն մը: Բննաքնուած են երկկողմանի յարաբերութիւններուն առնչուող հրատապ խնդիրներ, ներառեալ՝ ուժանիւթի մարզին մէջ համագործակցութեան հարցը: Փութին եւ Քոչարեան արծարծած են նաեւ շրջանային խնդիրներ:

ՀԱՄԱԵՎԱԿԱՆ ՔԱՆԴՈՒՄԻ ԶԵՆՔԵՐՈՒ ՀԱՐՅՈՎ

**ՔԱԶԱՑԻ ԿՈՂ ԿՊԻՂԵ
ԴԱՄԱՍԿՈՍԻ, ԹԵՀՐԱՆԻ
ԵՒ ՓԻՈՆԿԵԱՆԿԻ՝ ՀԵՏԵԻԿ
ԼԻՊԻՈՅ ՔԱՅԼԵՐՈՒՆ...**

ՌԻՍԵԻՆԿԹԸՆ, 23 (ԱՅՓ).- Լիպիոյ ղեկավար Մուամմար Քապաֆի յայտարարեց, որ իր երկիրը «սրբագրումի» որոշումը տուած է՝ հաւաքական քանդումը վե՛րջերուն գծով կատարած իր յայտարարութեամբ: Քապաֆի, որ կը խօսէր «Սի. Էն. Էն.» պատկերասփիռի կայանէն, դիտել տուաւ, որ Հիւսիսային Քորէայի, Սուրիոյ եւ Իրանի նման պետութիւններ, որոնք կ'ամբաստանուին կորիպային վէճեր ունենալու յանցանքով, պէտք է հետեւին Լիպիոյ օրինակին, որպէսզի կանխարգիլեն իրենց ժողովուրդներուն տառապանքն ու ողբերգութիւնը:

Քապաֆի ըսաւ, որ եթէ այս երկիրներն այլ հետեւին Լիպիոյ օրինակին, օղակը պիտի սեղմուի Իսրայէլի շուրջ եւ պարտաւորուած պիտի ըլլայ ինք եւս բացայտելու կորիպային վէճերու ծրագիրները: Քապաֆի անցեալ Ուրբաթ օր յայտարարած էր, թէ հաւաքական քանդումի վէճեր ունի: Ան շեշտեց սակայն որ անոնք կորիպային, կենսաբանական կամ քիմիական վէճեր չեն: Քապաֆի աւելցուց, որ գոյութիւն ունեցող ծրագիրները ոչ պիտուրական նպատակներու համար են:

Միւս կողմէ, լիպիացի բարձրաստիճան պաշտօնատար մը հաստատեց որ կորիպային ուժանիւթի միջնապային գործակալութեան տնօրէնը՝ Մոհամէտ Պարատէի Լիպիոյ պիտի այցելէ յառաջիկայ քանի մը օրերուն ընթացքին: Պաշտօնատարը աւելցուց, որ Լիպիոյ կ'ողջունէ Պարատէի այցելութիւնը:

**6 ՅՈՒՆՈՒԱՐԸ՝
ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՏՕՆ**

Նախարարաց խորհուրդը որոշեց, որ հայոց ծնունդը՝ 6 Յունուար 2004, երկրի տարածքին նկատի պէտք է ունենայ իբրեւ պաշտօնական տօն: Հետեւաբար, պետական եւ պաշտօնական բոլոր հաստատութիւնները այդ օր կը մնան փակ:

ՀՐԱՊԱՐԱԿԻ ՎՐԱՅ Է

**«ԱԶԳԱԿ»Ի 2004Ի
ԱՄԱՆՈՐԻ ԲԱՅԱՌԻԿԸ**

ԱԶԳԱԿ

2003 ՇՐՋԱՐԱՐՉԱՅԻՆ ՏԱՐԻ

Available on DVD & CD

www.koharconcert.com

Ազգային-բաղաբական, մշակութային եւ ալլազան բովանդակութեամբ 232 էջ: Ստանալու համար դիմել «Ազգակ»ի ցրուիչներուն:

Մակ 5000 Լ.Ռ.

Ս. ՍՏԵՓԱՆՈՍԻ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ ԸՆԴԵՐՄԱՒՈՐ Ս. ՊԱՏԱՐԱԳ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԵԶ

Կիրակի, 28 Դեկտեմբեր 2003ին, Ս. Ստեփանոս Նախասարկալազի եւ Սարկալազաց Տօնին առիթով, հանդիսաւոր Սուրբ եւ անմահ պատարագ պիտի մատուցուի կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ: Եկեղեցական արարողութեան պիտի հանդիսապետէ՝

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԱՐԱՍ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

Պիտի պատարագ եւ քարոզէ՝

ԳԵՐՇ. Տ. ԳԵՂԱՍ ԵՊՍ. ԽԱՉԵՐԵԱՆ

(Բարեջան Առաջնորդ Լիբանանի Հայոց)

Սկիզբ ժամերգութեան ժամը 8:00
Ս. Պատարագ ժամը 10:00
Էարոզ ժամը 11:00
Չեմնարկ ժամը 11:45

Պատարագէն ետք, վեհարանի դահլիճին մէջ տեղի պիտի ունենայ տօնին նուիրուած յատուկ ձեռնարկ, մասնակցութեամբ Գրիգորի սարկալազաց դասուն, որուն աւարտին վեհափառ հայրապետը իր պատգամը պիտի ուղղէ ուսանողներուն եւ հաւատացեալ ժողովուրդին:

Սիրով կը հրաւիրուին հաւատացեալները ներկայ գտնուելու եկեղեցական արարողութեանց եւ դասախօսական - գեղարուեստական ելոյթին, մերընչուելու Ս. Ստեփանոսի ցահատակութեան խորհուրդով:

ԴԻՒՍ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ

ԱՅՍՈՐ ՈՒՆԿԵՂՈՒԹՅԵՔ

Տանն Կիլիկիոյ Կաթողիկէ հայոց կաթողիկոս - պատրիարք Ամենապատիւ եւ գերերջանիկ ՏԵՐ ՆԵՐՍԵՍ ՊԵՏՐՈՍ ԺԹ.Ի

Ս. ԾՆՈՂԵԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՎԱՏԱԿԱՆ ԵՎ ԿԱՏՈՒՄՈՒՄ «ԼՈՒՍԱՍՈՒՏ» ԾՐԱԳԻՐԵՆ

Չորեքշաբթի, 24 Դեկտեմբերին, կեսօրէ ետք ժամը 3:00ին, «Թելէ Լիւմիթ» կայանին:

ՄԱՀԱԶԴ

Տէր եւ տիկին Մանասէ Քէշիշեան եւ զաւակունք
Տէր եւ տիկին Պետրոս Քէշիշեան եւ զաւակունք
Տէր եւ տիկին Գրիգոր Քէշիշեան եւ զաւակունք
Տէր եւ տիկին Րաֆֆի Քէշիշեան եւ զաւակունք
Տէր եւ տիկին Հրաչ Խաճարեան եւ զաւակունք
Տէր եւ տիկին Արա Խաճարեան եւ զաւակունք
Տիր Գարրիէլ Խաճարեան եւ զաւակունք
Տէր եւ տիկին Սողոմոն Քէշիշեան եւ զաւակունք
Տէր եւ տիկին Հաննա Սէյիտլը եւ զաւակունք
Յակոբեան ընտանիք
Տօնիկեան ընտանիք
եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց քրոջ, հօրաքրոջ եւ հարազատին՝

ԱՐՍԻՆԵ ՏԻԳՐԱՆ ԲԷՇԻՇԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Երեքշաբթի, 23 Դեկտեմբեր 2003ին, առաւօտեան ժամը 5:00ին, յետ կարճատեւ հիւանդութեան:

Յուզարկաւորութեան արարողութիւնը կատարուեցաւ Երեքշաբթի, 23 Դեկտեմբեր, կէսօրէ ետք ժամը 2:00ին, Պուրճ Համուտի Հայ Կաթողիկէ Ս. Փրկիչ եկեղեցւոյ մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը փոխադրուեցաւ եւ ամփոփուեցաւ Պուրճ Համուտի Հայ Կաթողիկէ գերեզմանատունը:

- Ներկայ ընդունիլ իբրեւ մահազոյ:
- Ցաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին բնակարանը, Տօրա, Չորեքշաբթի 24 եւ Հինգշաբթի 25 Դեկտեմբերին, ինչպէս նաեւ հանգուցեալին քոյրը՝ տեր եւ տիկին Հրաչ Խաճարեան ցաւակցութիւնները կ'ընդունին, Շաբաթ 27, Կիրակի 28 եւ Երկուշաբթի 29 Դեկտեմբերին, իրենց բնակարանին մէջ՝ Քուսուր, Դամասկոս:

ՄԱՀԱԶԴ

Ռաֆիք Շելա եւ ընտանիք
Ժողով Շելա եւ ընտանիք
եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց մօր եւ հարազատին՝

ՍԻԼՎԻ ՇԼԵԼԱՅԻ (Ծնեալ՝ Պարհուշ)

մահը, որ պատահեցաւ Կիրակի, 21 Դեկտեմբեր 2003ին: Յուզարկաւորութեան արարողութիւնը կատարուեցաւ Երեքշաբթի, 22 Դեկտեմբեր 2003, կէսօրէ ետք ժամը 3:00ին, Տրպայէի «Սուրբ» եկեղեցւոյ մէջ:

- Ներկայ ընդունիլ իբրեւ մահազոյ:
- Ցաւակցութիւնները կ'ընդունուին «Սուր» եկեղեցւոյ սրահին մէջ, Երկուշաբթի 22, Երեքշաբթի 23 եւ Չորեքշաբթի 24 Դեկտեմբերին:

Շ. Ս. Ը. Մ. Ի ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆ ՄԸՆԱԽԱԳԱԸ ԼԱՇՈՒՏԻ ՄՕՏ



Նախագահ Վոր. Էմիլ Լահուտ երէկ նախագահական պայտաին մէջ ընդունեց երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարար Սեպուհ Յովնանեանը, որուն կ'ընկերակցէր Շ. Ս. Ը. Մ. Ի Շրջանային Վարչութեան եւ փինկ փունկի աղջկանց պիտիան խումբի պատուիրակուիներ՝ Յակոբ Քէշիշեան, Րաֆֆի Մուշղուշեան, Համբիկ Միսաքեան, Հրայր Սաղըրեան, Միշէլ Խորոպեան, Պետիկ Լոճիքեան, Նայարէթ Հապիպեան, Լարա Քէշիպաշեան, Լիլա Պարիքեան, Մարիանա Սոմունճեան-Սահակեան, Նոէլ Քէշիշեան եւ Դուին Մուշղուշեան: Պատուիրակուիներ նախագահ Լահուտի յանձնեց Արաքական պիտիան խումբերու մրցաշարքին պիտիան հանդիսացած Շ. Ս. Ը. Մ. Ի փինկ փունկի աղջկանց խումբին բաժակը:

ՍԵՓԱԿԱՆ ՀԻՒՆԴԱՆՈՅՆԵՐԸ ՊԻՏԻ ԶԵՆԴՈՒՆԻՆ ՏԱՄԱՆԵ...

Լիբանանի մէջ գործող սեփական հիւանդանոցներու սենտիքան երէկ յայտարարեց, թէ պաշտօնապէս դադարեցուցած է Ընկերային Ապահովագրութեան Ազգային Սնտուկին (տանա) հետ իր գործակցութիւնը՝ Ուրբաթ, 26 Դեկտեմբերին սկսեալ: Որոշումը տրուեցաւ սեփական հիւանդանոցներու սենտիքայի գումարած երէկուան ժողովին, գլխաւորութեամբ սենտիքայի նախագահ Սէյման Հարունի: Հարուն իր խօսքին մէջ անդրադարձաւ որոշումին եւ Ընկերային Ապահովագրութեան Ազգային Սնտուկը նկատեց գլխաւոր պատասխանատուն այս որոշումին:

Հարուն շեշտեց, որ սենտիքան միշտ ալ փորձած է երկխօսութեամբ յանգիլ որոշումներու, սակայն «ինքնագլուխ» որոշումները պատճառ դարձած են այս որոշումին: Միւս կողմէ, Ընկերային Ապահովագրութեան Ազգային Սնտուկի տնօրէն խորհուրդը երէկ կէսօրէ ետք գումարած ժողով մը քննարկելու համար սեփական հիւանդանոցներու սենտիքայի նախագահ Սօրիս Ապու Նատեր յայտնեց, որ կը պզուցացնէ բոլոր այն հիւանդանոցները, որոնք պայմանագրութիւն ստորագրած են Ընկերային Ապահովագրութեան Ազգային Սնտուկին հետ, այլապէս, Ապահովագրութեան Ազգային Սնտուկը վերջնականապէս պիտի խզէ իր պայմանագրութիւնը հիւանդանոցներուն հետ եւ պանոնք դատաւարութեան պիտի կանչէ:

Սեփական հիւանդանոցներու սենտիքայի գումարած երէկուան ժողովին, գլխաւորութեամբ սենտիքայի նախագահ Սէյման Հարունի: Հարուն իր խօսքին մէջ անդրադարձաւ որոշումին եւ Ընկերային Ապահովագրութեան Ազգային Սնտուկը նկատեց գլխաւոր պատասխանատուն այս որոշումին: Միւս կողմէ, Ընկերային Ապահովագրութեան Ազգային Սնտուկի տնօրէն խորհուրդը երէկ կէսօրէ ետք գումարած ժողով մը քննարկելու համար սեփական հիւանդանոցներու սենտիքայի նախագահ Սօրիս Ապու Նատեր յայտնեց, որ կը պզուցացնէ բոլոր այն հիւանդանոցները, որոնք պայմանագրութիւն ստորագրած են Ընկերային Ապահովագրութեան Ազգային Սնտուկին հետ, այլապէս, Ապահովագրութեան Ազգային Սնտուկը վերջնականապէս պիտի խզէ իր պայմանագրութիւնը հիւանդանոցներուն հետ եւ պանոնք դատաւարութեան պիտի կանչէ:

Ա.Զ.Ս.Ա.Մ.Ա.Ր.Տ Ա.ԿՈՒՄԲ ԳԱՅՈՒՄԲ Ա.Զ.Ս.Ա.Մ.Ա.Ր.Տ Ա.ԿՈՒՄԲ

ՃԱՇԿԵՐՈՅԹ - ՊԱՐԱՀԱՆԴԵՍ Կերպէ ԸՆԿԵՐԱԿՆԵԱՆ Ընկերակցութեամբ ՍԵՐՈ ՊԱՐՏԱՍԱՐԵԱՆԻ Տեղի կ'ունենայ Շաբաթ, 27 Դեկտեմբեր 2003, երեկոյեան ժամը 8:00էն սկսեալ «Տիրան Պապիկեան» սրահին մէջ, Էշրեֆի: Տեղերը ապահովելու համար հեռաձայնել 01-449924 թիւին: Սակ՝ 20 տողար

ԿՈՒՂՈՒԻ «Էր ընտիրը»-ի ներկայացուցչութիւնը վայելող ընկերութիւն մը (Արեւմտեան Պէյրութ), կարիքը ունի փորձառու բեքիսիտներու, անցընողներու եւ նորագոյներու: Նաեւ կ'ուզուի համակարգիչ գիտցող հաշուապահուի մը, ժամը 2:00 - 5:00 ամէն օր: Կ'ուզուի ինքնաշարժի վարիչ մը, 30 - 40 տարեկան: Դեռ. 01 - 372702 - 03 - 800601:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ԸՆԿԵՐԱԿՆԵԱՆ ԳԵՐՇ. Տ. ԳԵՂԱՍ ԵՊՍ. ԽԱՉԵՐԵԱՆԻ (Առաջնորդ Լիբանանի Հայոց Թեմի)

ՀՈԳԵՒՈՐ ԴԱՍԱԽՈՍՈՒԹԻՒՆ Այսօր՝ Ուրբաթ, 26 Դեկտեմբեր 2003, երեկոյեան ժամը 6:00ին, Ս. Նշան Մայր եկեղեցւոյ մէջ: Դասախօս՝ ԸՆԿԵՐԱԿՆԵԱՆ ԿԻԼԻԿԻՍԵԱՆ Նիւթ՝ «ՔԱՀԱՆԱՅՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ» Սիրով կը հրաւիրենք մեր հաւատացեալները: ԹԱՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ Ս. ՆՅԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՅ

ԲԱՆԵՏԱՌՈՒՄԸ Տեր եւ տիկին տոքթ. Վիգէն եւ Արտա Գայթանեան բախտաւորուած են մանչ զաւակով մը՝ ՍԻՍՈՆ 22 Դեկտեմբեր 2003 Պէյրութ ԾԱԽՈՒ ԸՈՂ Այնձարի մէջ: Դեռ. 01-262599:

ԴԻՄԱՒՈՐԵՆՔ ՆՈՐ ՏԱՐԻՆ «ԱՂԲԱԼԵԱՆ - Շ. Ս. Ը. Մ.» ՄԱՐԶԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԸԱՄԱԼԻՐԻՆ ՄԵԶ

ԿԵՐԳԵՆ ԸՐԱԶ ԿԱՅԾԱԿԵԱՆ BIG JACK ՇԱԷՔ ՊԱՐՏԱՍԱՐԵԱՆ Մասնակցութեամբ՝ Saxophonist MARIO Ընկերակցութեամբ՝ ՍԵՐՈ ՊԱՐՏԱՍԱՐԵԱՆԻ եւ իր նուագախումբին • ԸԱՅԿԱԿԱՆ ՏՈՇՄԻԿ ԵՒ ԽԱՆԴԱԿԱՌ ՍՅՆՈՒՈՐՏ • ԸԱՄԱՂԱՍ ԵՒ ԲԱԶՄԱՏԵԱԿ ՃԱՃԵՐ • ԸԱՃԵԼԻ ԱՆԱԿԱԿԱՆԵՐ ՏԵՐԵՐԸ ԱՊԱՆՈՎԵԼՈՒ ԸԱՄԱՐ ԸՆՈԱԶԱՅՆԵԼ 03-351353 եւ 04-722902/3

ԸՆՏԱՆԻՔԻ ՏԱՐԻ ԸՆՏԱՆԻՔԻ ՏԱՐԻ ՎԵՀԱՓԱՌ-ՀԱՅՐԱՊԵՏԻ ՊԱՏԳԱՄԻ ԸՆԹԵՐՅՈՒՄ Մեծի Տանն Կիլիկիոյ հայրապետ՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. ԱՐԱՍ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ 2004 տարին հռչակած է հայ ընտանիքի տարի: Այս առիթով, թեմի բարեջան առաջնորդ Գերշ. Տ. Գեղամ եպ. Խաչերեանի տնօրինմամբ, Կիրակի, 28 Դեկտեմբեր 2003ին, Լիբանանի թեմի բոլոր եկեղեցիներէն ներս յընթացս Ս. Պատարագի հանդիսաւորապէս պիտի ընթերցուի վեհափառ հօր յատուկ պատգամը: Սիրով կը հրաւիրենք մեր սիրելի ժողովուրդը ներկայ ըլլալու Ս. պատարագին եւ ունկնդրելու վեհափառ հօր հայրապետական պատգամը մեր ժողովուրդի խարխիւր հանդիսացող հայ ընտանիքի առողջ պահպանման ի խնդիր: ԿՐՕՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Կազմակերպութեամբ՝ «ՊՁՏԻԿ - ՍՁՏԻԿ»-Ի ԺԱՊԱԲԵՆԻ ՅՈՒՅԱՂՈՒԹԻՒՆ «ՄԻՍԻԶ ՍԱՆԹԱ ՔԼՈԶ» Տեղի կ'ունենայ Կիրակի, 4 Յունուար 2004ին, առաւօտեան ժամը 11:30ին, «Յակոբ Տէր Մէլքոնեան» բաւտրարարի մէջ: • Տոմսերը ստանալ Համազգայինի գրախանութեմ, «Ազդակ»-ի խմբագրատունէն եւ ցուցադրութեան օրը սրահին մուտքէն:

ԸԱՅ ԿԱԹՈՂԻԿԵ ՊԱՏՐԻԱՐԵԱՐԱՆ ԾՆՈՒՆԴ ՏԵԱՆՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՄ ԸՐԻՍԱՏՈՒ

ԸԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ Պիտի մատուցանել եւ յաւուր պատշաճի իր հայրապետական պատգամը պիտի փոխանցէ՝ Ամենապատիւ եւ գերերջանիկ ՏԵՐ ՆԵՐՍԵՍ ՊԵՏՐՈՍ ԺԹ. ԿԱԹՈՂԻԿՈՍ ՊԱՏՐԻԱՐԵ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿԵ ԸԱՅՈՑ

Դինգշաբթի, 25 Դեկտեմբեր 2003, առաւօտեան ժամը 10:00ին, Ս. Գրիգոր Լուսաւորիչ - Ս. Եղիա աթոռանիստ եկեղեցւոյ մէջ: Յաւարտ Սուրբ պատարագին, առաւօտեան ժամը 11:30էն 1:00 եւ երեկոյեան ժամը 4:00էն 7:00, ինչպէս նաեւ Ուրբաթ 26 եւ Շաբաթ 27 Դեկտեմբեր, երեկոյեան ժամը 4:00էն 7:00, Ս. Ծննդեան տօնին առիթով Ընդհուր Տէրը պիտի ընդունի պատրիարքարանին մէջ հաւատացեալներու շնորհաւորութիւնները: ԴԻՒՍ ԸԱՅ ԿԱԹՈՂԻԿԵ ՊԱՏՐԻԱՐԵՈՒԹԵԱՆ

ՍՈՒՐԲ ՍՏԵՓԱՆՈՍԻ ՏՕՆԸ Ս. ՔԱՌԱՍՆԻՑ ՄԱՆԿԱՆՑ ԵԿԵՂԵՑՈՅ ՄԵԶ

Ս. Ստեփանոս Նախասարկալազի եւ Առաջին Մարտիրոսի տօնին առիթով, Դինգշաբթի, 25 Դեկտեմբեր 2003ին, Սուր Մարաշի Ս. Զառանից Մանկանց եկեղեցւոյ մէջ պիտի մատուցուի Սուրբ եւ անմահ պատարագ: Արարողութեան պիտի հանդիսապետել եւ աւուր պատշաճի քարոզէ՝

ԳԵՐՇ. Տ. ԳԵՂԱՍ ԵՊՍ. ԽԱՉԵՐԵԱՆ (Բարեջան Առաջնորդ Լիբանանի Հայոց) Սկիզբ ժամերգութեան ժամը 7:30 Ս. պատարագ ժամը 9:30

Այս տօնը տօնն է նաեւ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ Սարկալազաց դասուն: Այս առիթով կը հրաւիրենք հաւատացեալ ժողովուրդը ներկայ գտնուելու Ս. պատարագին եւ հաղորդուելու օրուան խորհուրդով: ԹԱՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ Ս. ԶՆՈՍՆԻՑ ՄԱՆԿԱՆՑ ԵԿԵՂԵՑՈՅ

Կազմակերպութեամբ՝ Շ. Յ. Դ. ԼԵՄԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿԱՐՉՈՒԹԵԱՆ ՄՐՅԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹԻՒՆ Պրօվէլ պետական ընծութեանց հայկական վարժարաններու բարձր միջեր ապահոված աշակերտներու Տեղի կ'ունենայ Ուրբաթ, 26 Դեկտեմբեր 2003ին, երեկոյեան ժամը 8:00ին, «Շ.Ս.Ը.Մ. - Աղբալեան» մարզամշակութային համալիրի «Սերժ Թովմասեան» սրահին մէջ, Սըգիտ: ԸՐԱԲԵՐ

ՍՈՒՐԲԻ ԽԱՉ ԵԿԵՂԵՑԻՈՅ
ԺՈՂՈՎՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ - ՉՍԼՔԱ
ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ
 Չորեքշաբթի, 24 Դեկտեմբեր 2003
ԾՐԱԳԱԼՈՅՑ Ս. ԾՆՆԴԵԱՆ
 Ժամը 5:30ին Սարգսյան փողոցում ընթերցում
 6:00ին Խրատան Ս. պատարագ
 Կես գիշեր
 Ժամը 12:00ին, Ծննդեան Ս. պատարագ
 Հինգշաբթի, 25 Դեկտեմբեր 2003
Ս. ԾՆՈՒՆԴ Ս. Մ. Յ. Ք. Ի
 Ժամը 8:30ին Ս. պատարագ
 10:30ին Կը պատարագ է կը բարոզ
ԱՐԿԻԱՊԱՏԻ Ը. ՎԱՐԴԱՆ ԵՊՍ. ԱՇԳԱՐԵԱՆ
 Հինգշաբթի, 1 Յունուար 2004
ՏՆՈՐԵՆՈՒԹԻՒՆ Ս. Մ. Յ. Ք. Ի
 Ժամը 10:00ին Ս. պատարագ
 12:00ին Հանդիսատես Ս. պատարագ
ՇՆՈՐՀԱՒՈՐ Ս. ԾՆՈՒՆԴ ԵՒ ՆՈՐ ՏԱՐԻ

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՋԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԳԱՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՓՈՔՐԵՐԸ

Ամանորեան տօնական շնորհատրական մթնոլորտին մէջ, առաջնորդ արքայանը Պուրճ Համուտի Ազգային առաջնորդարանի իր գրասենեակին մէջ ընդունեց Ազգային Արգարեան վարժարանի մանկապարտեզի աշակերտութեան շնորհատրական այցելութիւնը: Փոքրիկները Առաջնորդ արքայանին յանձնեցին իրենց ձեռակերտ Նոր Տարուան նուէրները, խորհուրդ Մեծ շարականով աւետեցին Ս. Ծնունդը եւ բարեմաղթութիւններ կատարեցին:

Առաջնորդ արքայանը իր ուրախութիւնը յայտնեց փոքրերուն ընկերակցող պատասխանատուներուն եւ գնահատեց վարժարանին տնօրէնութեան նախաձեռնութիւններն ու մանուկներուն փոխանցած հայկական ոգին:

ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԲԱՐՉՐԱԳՈՅՆ ՎԱՐժԱՐԱՆԻ ՓԱՅԼՈՒՆ ԻՐԱԳՈՐԾՈՒՄԸ

Ուել քաղաքացի պարտաւոր է իր հայրենիքին կամ ապրած երկրին մասին լայն տեղեկութիւն ունենալու: Ասիկա կը սկսի դպրոցէն: Լիբանանցի աշակերտը այդ գիտելիքները ամբարելու մղելու հեռանկարով «Թէլէ Լիպան»ը կազմակերպած է «Ալ Մուսապաքա» անունով մրցանք մը:

Մրցանքին մասնակցելու համար արձանագրուած են Լիբանանի ամբողջ տարածքին գտնուող վարժարաններէն 64ը: Իւրաքանչիւր վարժարան կը մասնակցի երկրորդականի աշակերտներէ բաղկացած երեք հոգինոց խմբակով մը: Մրցանքը կ'ընդգրկէ Լիբանանի աշխարհագրութեան, պատմութեան, գրականութեան, նշանաւոր դէմքերուն, մշակոյթին, ժողովրդային առածներուն, ուսողութեան եւ քիմիագիտութեան վերաբերեալ հարցումներ:

Չորրորդ նկարահանումին ընթացքին Հայ Աւետարանական Կեդրոնական Բարձրագոյն վարժարանի խմբակը (Նարինէ Պուլղուրճեան, Անթո Բէշճեան, Սեւակ Չալրգեան) մրցակից ունեցաւ Սէն Քէօր - Այն Նըմ դպրոցի խմբակը եւ 13-8 կէտով յաղթանակ արձանագրեց:

5 Յունուար 2004ին սկսեալ ամէն երկուշաբթի, Չորեքշաբթի եւ Ուրբաթ օրերը երեկոյեան ժամը 6:30ին «Թէլէ Լիպան»էն պիտի սփռուին նկարահանումները: Կերտնշեալ յաղթանակը պիտի սփռուի 12 Յունուարին:

Մրցանքի աւարտին յաղթական խումբը նիւթապէս պիտի վարձատրուի:

«ՎԱՆԱՅ ԶԱՅՆ»Ի ԱՅՍՕՐՈՒՄՆ 3ԱՅՏԱԳԻՐՆԵՐԸ

8:30.- Լիբանանեան մամուլի խորագիրներու ընթերցում՝ արաբերէն
 8:45.- «Աստղեր»
 9:00.- «Ռատիօ - Թատրոն» կը ներկայացնեն Մարի Ռոզ Մանուկեան եւ Մանուէլ Մարգարեան
 9:40.- «Օրուան տոմար»
 9:45.- «Աստղիկ» կը ներկայացնեն յայտագիր
 10:45.- «Ինչպէս կը տօնէք»... այսօրուան հիւրըն է Երեւանի գործոց նախարար Էլիաս Սըր
 11:30.- Լիբանանեան մամուլի խորագիրներու ընթերցում՝ հայերէն
 1:30.- Հայաստանեան լուրեր
 3:00.- «Ի՞նչպէս կը տօնէք» (կրկնութիւն)
 3:10.- Ս. Ծննդեան տօնին առիթով արաբերէն յատուկ յայտագիր
 4:45.- «Բարի երեկոյ Վանայ Չայնէն»... ուղղակի ձայնասփռում այլազան եւ հետաքրքրական միութեան, երգեր, հարցազրոյց եւ այլն: Յայտագիրին հիւրերն են Հայկաի «Կոմիտաս» խումբի անդամները
 6:50.- «Օրուան տոմար» (կրկնութիւն)
 7:05.- «Ի՞նչպէս կը տօնէք» (կրկնութիւն)

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

● ՆԱԽԱԳԱՎԱԿՈՐ ԷՄԻ ԼՍԻՈՒՄ ԵՐԷԿ ՊԱՍԱՊԱՅԻ մէջ ընդունեց Լիբանանի մէջ Քըլտան համալսարանի առաջնորդ Միշէլ Քասարճի եպիսկոպոսը, որուն հետ քննարկեց երկրին ընդհանուր հարցերը, ինչպէս նաեւ իր ներկայացուցած համալսարանի Լիբանանի մէջ դիմագրուած հարցերը:

Նախագահ Լսիոտի այցելեցին նաեւ նախկին նախարար Ֆաուրի Հրայրէ, երեսփոխան Մոհամէտ Եահիա, պիւնտրական ատեանին մօտ կառավարութեան ներկայացուցիչ դատախաչ Ժան Ֆահրտ, նախկին երեսփոխան Պետաէտտին Այրանի եւ նախկին նախարար Յակոբ Չուխատարեան, որուն կ'ընկերակցէին անոր ընտանեկան պարագաները:

● **ԽՈՐՀՐԳՐԱՆԻ նախագահ Նեպիի Պրորի երէկ ընդունեց Լիբանանի մէջ Եմէնի դեսպան Մոհամէտ Ապտէլ Մեթիտ Բուպարին**, որուն հետ քննարկեց Լիբանան - Եմէն երկկողմանի յարաբերութիւնները: Պրորի այցելեց նաեւ Փարիզ մեկնած իբրանսեան խորհրդարանական յանձնախումբը, որ իրաւիքում էր երկրագործութեան եւ քրօսաշրջութեան յատուկ խորհրդատուական մասնակցելու:

Յանձնախումբին մաս կազմող երեսփոխան Նեպիի Տր Ֆրէյժ յայտնեց, որ Պրորիէն նամակ մը յանձնած է Տրանսալի խորհրդարանին, զայն տեղեակ պահելով պաղեստինցի գաղթականներու բնակեցման ծրագիրին մասին Լիբանանի պաշտօնական մերժողական կեցուածքէն:

Շար-ը՝ էջ 10

ՀՐԱՊԱՐԱԿԻ ՎՐԱՅ Է ԿԻՆԿԻԱ ԲԱՌ - ԽԱՂ ՀԱՅԵՐԵՆ SCRABBLE

ALEXANIAN EXCHANGE
 Bourj-Hammoud - Armenia Street
 Tel.: (01) 252952 - 252852 - (03) 270755

ՎԱՆԷ ՓՈՒՄՄԱՆ Ս. ԿՈՒՄՆԻ ԶՄԱՆԱ
 Չորեքշաբթի, 24 Դեկտեմբեր 2003
ԾՐԱԳԱԼՈՅՑ Ս. ԾՆՆԴԵԱՆ
 Սուրբ պատարագ երեկոյեան ժամը 6:00ին
 Հինգշաբթի, 25 Դեկտեմբեր 2003
Ս. ԾՆՈՒՆԴ
 Սուրբ պատարագ առաւօտեան ժամը 10:30ին
 Ս. ԾՆՆԴԵԱՆ ԵՒ ՆՈՐ ՏԱՐՈՒՄԱՆ տօներուն առիթով Ձմեռու միաբանութիւնը կը շնորհաւորէ հաւատացեալները եւ շնորհաւորութիւններ կ'ընդունի Ուրբաթ, 26 Դեկտեմբերին եւ Կիրակի 28 Դեկտեմբեր 2003ին, առաւօտեան ժամը 9:00էն մինչեւ երեկոյեան ժամը 6:00, վանքիս դահլիճին մէջ:

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵ Ս. ՓՐԿԻՉ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԺՈՂՈՎՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ Պ. Ը. ՇԵՆ. 01-261505

ԾՆՈՒՆԴ ՏԵԱՆՆ ՍԵՐՈՅ ՅԻՍՈՒՄ ԸՐԻՍՏՈՍԻ
 Ս. Փրկիչ եկեղեցւոյ ժողովրդապետութիւնը սիրով կը հրաւիրէ հաւատացեալ ժողովուրդը, մասնակցելու հանդիսատես Ս. պատարագին գորպիտի մատուցանելու եւ անոր պատշաճի բարոզէն
ԱՐԿԻ, Ը. ՅՈՎԿԱՆԵՍ ԵՊՍ. ԹԵՅՐՈՒԶԵԱՆ
 Հինգշաբթի, 25 Դեկտեմբեր 2003, ժամը 10:00ին:

ՉԵՆԲ ԿՐԵԼՈՒ ԱՐՏՕՆԱԳԻՐՆԵՐԸ ԿԸ ՍԱՌԵՑՈՒՄ

Պաշտպանութեան նախարար Մահմուտ Համուտ երէկ հրապարակեց շրջաբերական մը, որուն հիմամբ վէպ կրելու բոլոր արտօնագիրները կը ստեղծուին այսօր երեկոյեան ժամը 8:00էն մինչեւ 2 Յունուար 2004ին կէս գիշեր: Որոշումը չի վերաբերիր պետական եւ դիւանագիտական անձնատրութիւններու թիկնապահներուն: Բոլոր անոնք, որոնք օրէնքը կը խախտեն՝ պիտի ենթարկուին խիստ պատժամիջոցներու:

ՀԱՅ ՕԳՆՈՒԹԵԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

Իր բոլոր միաւորներուն ու հազարաւոր անդամներուն հետ, կողջունէ 21րդ դարու 4րդ տարին՝ 1910Են ի վեր իրականացուող մարդասիրական իր աշխատանքներուն հորիզոնը աւելի եւս ընդլայնելով, նորանոր յանձնառութիւններով ընդառաջելու համար համահայկական կարիքներուն: Տօնական այս օրերու վերանորոգ հաւատքով յուսալից՝ Հայ Օգնութեան Միութեան Կեդրոնական Վարչութիւնը, հակառակ համայն մարդկութեան յառաջխաղացին դէմ ցցուող մերօրեայ բազմաթիւ պատուարներէն բխող մարտահրաւիրութիւններուն - մնալով ժողովուրդին հետ ու աշխատելով մեր ժողովուրդին համար - հաւատարիմ կը մնայ իր ուխտին, իր գթաշատ սրտին մայրական զարկերով շարկապետով հայրենի ու սփիւռեան մեր ոստանները:

Ուրախ Ամանոր ու շնորհաւոր Սուրբ Ծնունդ բոլորին:

ՀԱՅ ՕԳՆՈՒԹԵԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԿԵՂՈՒՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ՆՈՐ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐՈՒ ԾԻՆՈՒԹԻՒՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻՆ ԿՈՂՄԵ

Ուրախութեամբ կ'ուզենք յայտնել, որ Կաթողիկոսարանը որոշած է 70 յարկաբաժիններ ներառող չորս շէնքեր շինել Ֆանարի «Լէյլաւան» համալիրին կից գտնուող հողաշերտին վրայ: Ծիւղութիւնները պիտի սկսին Յունուար 2004ին եւ պիտի աւարտին շուրջ մէկ տարին: Յարկաբաժինները պիտի ըլլան երկու չափի՝ երկու սենեակ - մէկ հիւրասրահ եւ մէկ սենեակ - մէկ հիւրասրահ, իրենց յարակից բաժիններով: Ծիւղութեան որակը պիտի ըլլայ միջակակ վեր:

Մեր ժողովուրդի զաւակներուն ցուցաբերելիք հետաքրքրութեան լոյսին տակ յարկաբաժինները թէ՛ ծախելու, թէ՛ վարձու տալու կարելիութիւններ պիտի տեսնուին:

Շտաբքերու լոյսին կրնան ներկայանալ Կաթողիկոսարանի դիւանապետ պրն. Խաչիկ Տետեանցին, Անթիլիասի Մայրավանքը, թուականէ մինչեւ 15 Յունուար 2004, ամէն օր ժամը 10:00Են 12:00:

ԴԻՒՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ

ՄՈՆԻՏՐԱԿ ԿԱՆԱՅ ՍՓՈՐ

Նոր յայտագիրներու ծիրին մէջ 1 Յունուար 2004ին սկսեալ «Վանայ Չայնէն»-ը շաբաթական հերթականութեամբ պիտի ձայնասփռուի «ՄՈՆԻՏՐԱԿ ԿԱՆԱՅ ՍՓՈՐ»-ը: ԽԱՂ - ՄՐՏԱՆԵԸ, որուն մասնակցները Սոնտիալի դրութեամբ պիտի մրցին իրարու դէմ եւ վերջապետութեան առաջին երեք դիրքերը գրաւողները պիտի ստանան արժեքաւոր նուէրներ:

Անոնք, որոնք կը փափաքին մասնակցի այս մրցանքին, պետք է որ մինչեւ Երեքշաբթի, 30 Դեկտեմբեր 2003 հեռաձայնեն «Վանայ Չայնէն»՝ 01-267657 եւ 01-241199 թիւերուն, արձանագրուելով քարտուղարութեան մօտ:

ԱՃԱՊԱՐԵՅՏԵՔ ԵՒ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԵՔ «ՄՈՆԻՏՐԱԿ ԿԱՆԱՅ ՍՓՈՐ»-ԻՆ

TOGETHER WE ARE STRONGER
ՄԻԱՍԻՆ ԱԲԵԼԻ ԶՕՐԱԴՈՐ ԵՆՔ

ԱՏՏՔԻ ԱԲԻԼ
 Armenian Mutual Fund
 Tel. / Fax: 01 242556 - 242557

TOSHIBA
 GET THE **BIG PICTURE**
 AT A SMALL PRICE

CITY FACE
 HyperPro 100HZ
 MADE IN JAPAN

FREE TOSHIBA DVD MADE IN JAPAN VALUE \$345+VAT

UNILEC
 TEL: 04.718444

Limited quantities

1ԷՆ մինչեւ 14 տարեկան փոքրերու Եւրոպական Վաճառանիշերով հազուատներ

NEW BOY NEW GIRL
MOMDJIAN JUNIOR

Ուրախութեամբ կը յայտնէ, թէ վերաբացած է Չայնայի իր Վաճառատունը, ուր իւրաքանչիւր գնումին համաձայն կ'ընձայէ նուէր մը:

MOMDJIAN JUNIOR
 Ա. մասնաճիւղ:
 Չայնա,
 Գեղ: 01-879055

Բ. մասնաճիւղ:
 Մար-Իլիաս,
 Մարասեւ
 կեդրոնին դիմաց

Գ. մասնաճիւղ:
 Սուր,
 Իսթրախաթ թաղ

ԱԿՆԱՐԿ Ո՞ՒՐ ԵՆ ՄԵՐ ՀԱՅՐԵՆԱՍԵՐ «ՈՒՒՏԱՒՈՐՆԵՐԸ»

(ԼԵՒՈՆ ԹԱՃՃԵԱՆԻ ԶՈՒՅԱԿԱՆԴԵՍԻՆ ԱՌԻԹՈՎ)

«Հայաստան - Աշխարհ» անուանումով լուսանկարչական ցուցահանդեսը մեր ներկայացուցչության լիբանանահայ գաղութին (19 - 21 դեկտեմբեր 2003): Արեւմտեան Հայաստանէն, արդի Հայաստանէն, Կիլիկիայէն գեղեցիկ եւ գունաւոր լուսանկարներ նկարած է հայրենասէր լուսանկարիչ Լեւոն Թաճճեան, որ բազում դժուարութիւններ յաճճ առնելով, թուրք սահմանապահ զինուորներու, պետական պաշտօնեաներու արգելքներուն ենթարկուելով, նիւթական ու բարոյական զոհողութիւնները անտեսելով յաջողած է պատմութեան մշտնջենականութեան յանձնել հայոց աշխարհի պատմական վայրերը: Կիսաւեր տաճարներու, մատուռներու պատկերներ, կամուրջներ, բերդեր, հնամենի տուներ, որոնք տակաւին բոլորովին չեն քանդուած, նաեւ տեսարժան վայրեր ու բնակավայրեր արժանացած են Լ. Թաճճեանի սիրով անբաժանելի շերտերէն, հետաքրքրութեան իբրեւ վկայարաններ հայոց պատմական եւ դարաւոր կեանքին, հոն, Արեւմտեան Հայաստանի թէ Կիլիկիոյ մէջ:

Այս նկարները ցուցադրուեցան «Աղբալեան - Հ.Մ.Ը.Մ.» մարզամշակութային համալիրի «Սերժ Թովմասեան» սրահին մէջ: «Ազգակ» անդրադարձաւ ցուցահանդեսին կայացման Շաբաթ, 20 Դեկտեմբերի իր թիւին մէջ:

Մեր սկզբնական կ'ուղղեք մասնաւորաբար այն «ուխտաւորներուն», որոնք յաճախ ճամբայ կ'ելլեն դէպի մեր բռնագրաւուած հողերը, կարօտաբար հայտնաբերուած հողերը, տեսնելու իրենց հայրենի երեքմիջի արած երկիրը ու քաղաքները, գիւղերն ու սրբավայրերը: Մեր ուխտաւոր հայրենակիցները անշուշտ իրենց հետ բերին քանի մը լուսանկարներ իբրեւ յիշատակ, այսուհանդերձ տարբեր հմայք եւ հաղորդակցութիւն ունի վարպետ լուսանկարիչին ու պատկերի տեսողութիւնը - ճաշակը, լուսանկարները ներկայացնելու ոճը: Իւրաքանչիւր հայրենասէր եւ ուխտագնաց, Կիլիկիայի կամ արեւմտեան հայաստանի մնացորդաց որդի, արդեօք փափարք չունեցաւ երթալու այս ցուցահանդեսին սրահը եւ իրեն հետ վերցնելու գոն մէկ պատմական լուսանկար մը իր պապերուն ապրած քաղաքէն կամ գիւղէն՝ իբրեւ մնացուած յիշողութեան գրգիռ, փոխանցելու սերունդէ սերունդ, որդիէն թոռան:

Հետաքրքրութեան կամ յանձնառութեան բացակայութիւնը կամ չունի եւ չի կրնար ունենալ ներկայի մեր ունեցած տնտեսական տագնապին հետ, որովհետեւ սուղ չեն եւ նոյնիսկ հայրենակցական միութիւն մը կրնար վերցնել մէկ-երկու նկար՝ միութեան տան մէջ կախելու կամ դպրոցի մը նուիրելու: Եղածը կը վերագրենք հետաքրքրութեան պակասին, նաեւ անտարբերութեան դրսեւորումին, որ երեւան կու գայ մասնաւորաբար պատրաստուած պատուաւ մը, տպաւորիչ լուսանկար մը հայ տան գարդն է, մնացուած յուշարարը, ՀԱՅ ԳԱՏԻՆ մասին մտածելու, գայն օտարին եւ ծանօթացնելու մղում տուող շունչ մը...

Եթէ մտածեմք, թիչ մը խորհրդածեմք Լեւոնին հայրենի աշխարհը ծանօթացնող լուսանկարներուն ցուցահանդեսին մասին, մէկ հատ լուսանկար պիտի չմնար լուսանկարիչին մօտ: Պէտք էր լսելիք իր վկայութիւնը, թէ Թուրքիոյ մէջ տարուէ տարի կը քանդեն, կը փշրեն, եւ կը «շոգիացնեն» հայրենեան ներկայութիւնը, տիրութիւնը մատնանշող ամէն տեսակի վկայութիւն, կառոյց ըլլալ թէ խաչքար, փշրանք մը տապանաքար թէ մատարն մը մկրտարան աւազան: Յանախ չենք օգտագործեր առիթները, ետքը կ'ափսոսանք... Լ. Թաճճեանի լուսանկարները հարկ է որ... սպառնի մեր հաստատութիւններուն եւ ընտանիքներուն կողմէ:

ԱՆԿԱՊ ԵՒ ԱՆԿԱԽ ԽՈՂՆԵՐ՝ Ս. ԾՆՆՂԵԱՆ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ

Յիսուսի Մնունդը կը տօնախմբուի մեր մոլորակին վրայ, առանց սեռի եւ գոյնի խտրութեան, հաւատացեալ ըլլանք թէ ոչ, քանի որ արձակ օր է, զրօսի եւ ժամանցի հրաշքի վերածուած է ինչ որ պէտք է ըլլար խորհուրդ, խորհրդաձօնութիւն, անցեալի, ներկայի, ապագայի, տիեզերքի մէջ մեր տեղի մասին: Սպառողական ընկերութիւնը հարթած է հակառակ պահած է կեղեք, այն՝ որ քրիստոնէական պատգամին հակառակ իսկ է:

Միթէ՞ դեռ ունակ ենք գէթ պահ մը դիմադրելու մեզ մեր անձէն դուրս բանտարկող երեւոյթներէն ձեռքազատուելով այլ բան մտածելու, ինքնուրիշ նուաճելու, ճշդելու մեր տեղը եւ դիրքը մեր գիտակցութեան առջեւ տեսարար անող տիեզերքի անսահմանութեան մէջ: Ճարտարարուեստական եւ սպառողական ընկերութիւնը սահմանափակած է հարազատութեամբ խորհրդածելու դաշտը, գայն փոխարինած է փողոցներու եւ մեծ վաճառատուներու լոյսերով, հրավառութիւններով, ցուցափեղկերէն դուրս յորդող պարանքներով:

Իրաք Յրանսայի երեք միլիառ տոլար պարտք ունի: Չի կրնար վճարել: Պիտի ջնջեն կամ զգալապէս պիտի նուազեցնեն պարտքերը: Բայց պարտատէրերը ինչ ծախս են իրաքի, կամ այլ երկիրներու, որոնք այսօր կը կրնան իրենց պարտքերու բեռն տակ: Լաւ կ'ըլլայ որ Ամերիկայ, Պրագայի, Յրանսա, Անգոլայ եւ միւսները յայտնեն թէ իրաքի ինչ ծախս են... Առեւտուրը եւ շահը գերակշռած են, փակադիտի մէջ դնելով մարդը: Ս. Ծննդեան տօնի առիթով, փարթամ սեղաններու առջեւ ինքնամոռացութեան տրուելէ առաջ, կ'արժէ որ պահ մը

մտածենք այս հարցերուն մասին: Ի դէպ, երեք միլիառ տոլարով, Յրանսայի մէջ, քանի հազար բնակարան կարելի էր կառուցել եւ տալ անտուն եւ անբրդիք բնտնախնայներու: Հարկ է հարց տալ ինչարարներու եւ ճարտարապետներու, ինչո՞ւ ոչ նաեւ Ընկերային Հարցերու նախարարութեան: Յիսուսի Մնունդեան տօնը անգիր եղած խօսքերէն եւ Ս. Գրոց մեքենական ընթերցումներէն տարբեր մտածումներ պէտք է թելադրէ, որոնց շարքին այն որ բնութեան եւ մարդկային մտքի նուաճումները հասարակապէս պէտք է ծառայեն բոլոր մարդոց, որ ուրիշ իրաւունքը մեր պարտականութիւնն է, որ նմանի հանդէպ սէրը էական առաքինութիւն է: Բայց ո՞վ կը զբաղի այս կարգի մարդկային հարազատութեան հարցերով:

Մեր անմիջական պատմութիւնը եթէ սեւեռներ, պիտի հաստատենք որ կրօններու, պիտի նախընտրէի ըսել մարդկային անդամութեան ներդրումները, առանց արհեստի նմանող կրկնութիւններու, հաւաքաբար կամ առանձին, գիտակցելու ճիշդ մը բարիք պիտի ըլլալ մեր անձին, եւ ինչո՞ւ ոչ՝ մեր շրջապատին եւ անկէ անդին:

Այսօր քրիստոնէայ աշխարհը կը սօնէ Յիսուսի Մնունդը: Աւետարանը կը խանդարեն, կը քանդեն: Ներկայիս, պաշտօնապէս յայտարարուած սկզբունքներու եւ իրականութիւններու միջեւ խրամատ կայ եւ ընթացքը այնպէս է որ կարծէք մարդկութիւնը ինքզինք կ'ականահարէ: Թերեւս պէտք է դիմել Յրէժայի բացատրութեան որ կը խօսէր մեզի յատուկ ինքնաբանողումի եւ մահուան տեսակ մը ծարաւի մասին: Ինչ որ կ'ըսենք քրիստոնէական տօնի առիթով,

կրնանք անվարան կրկնել բոլոր կրօններու պարագային: Համաշխարհային նացման հետեւնքով պիտի շարունակուի եւ պիտի շեշտուի միատեսակ սպառողական ընկերութիւնը, հեռանկարը պիտի ըլլայ շահը մարդուն դէմ: Դիտած էք բնութիւնը, կենդանական աշխարհը, միջատները: Մարդը միակ էակն է որ օրուան բոլոր ժամերուն չի մտածեր անունդի մասին, այլ հետաքրքրութիւններ ունեցած է եւ ունի: Միօրինականացումը, զբօս-ժամանցի հեզքը, սպառողական կիրքը եւ հրաւերը, ո՞ր պիտի տանին մարդն ու մարդկութիւնը: Եթէ լուծումներ անգամ չկան հորիզոնի վրայ, կ'արժէ որ առնուազն անկեղծ եւ քաջ ըլլանք, խորհուրդի մը տօնին առիթով, մենք մեզ եւ մեր շրջապատը հարցապնդելու:

Այսօր Քրիստոսի խորհուրդը կրող Մնունդեան տօնն է: Ըսուած է որ ան աշխարհ եկաւ մարդոց համար: Առանց կրօնական ներդրումներ, առանց արհեստի նմանող կրկնութիւններու, հաւաքաբար կամ առանձին, գիտակցելու ճիշդ մը բարիք պիտի ըլլալ մեր անձին, եւ ինչո՞ւ ոչ՝ մեր շրջապատին եւ անկէ անդին:

Այսօր քրիստոնէայ աշխարհը կը սօնէ Յիսուսի Մնունդը: Աւետարանը կը խանդարեն, կը քանդեն: Ներկայիս, պաշտօնապէս յայտարարուած սկզբունքներու եւ իրականութիւններու միջեւ խրամատ կայ եւ ընթացքը այնպէս է որ կարծէք մարդկութիւնը ինքզինք կ'ականահարէ: Թերեւս պէտք է դիմել Յրէժայի բացատրութեան որ կը խօսէր մեզի յատուկ ինքնաբանողումի եւ մահուան տեսակ մը ծարաւի մասին: Ինչ որ կ'ըսենք քրիստոնէական տօնի առիթով,

«ԱԶԳԱԿ»

ՀԵՌԱԶՁԱՅՆԻ ԹԻԻԵՐԸ
«ԱԶԳԱԿ»-ի հետ կապուելու համար հեռաձայնել հետևեալ թիւերուն.- 258526, 260115 եւ 241274:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ԼԻԲԱՆԱՆԻ
ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻԻՄ

ՅԵՆՈՒՆԵՆԻ
ՊԱՐԱՀԱՆԴԵՍ

Երկուշաբթի, 5 Յունուար 2004թ,
Երեկոյեան ժամը 9:30ԵՍ ԱԿՃԱԿ,
BIEL PAVILLON ROYAL
սրահին մէջ:

ԵՐԳԱՀԱՆԴԵՍ
Երեքշաբթի, 6 Յունուար 2004,
Երեկոյեան ժամը 7:30ԵՍ
UNESCO սրահին մէջ:

ՏՈՍՍԵՐԸ ԿԸ ՎԱՃԱՌՈՒՆ
Obelix գրախանութ, Ալթիլիաս - Promenade Ջալթա
Համազգայինի «Լեւոն Շանթ» կեդրոն
Համազգայինի գրախանութ
Shugrout Geka - Սթրիտո Վաչէ, Հանըն:

ՆԱՍԱԿ ԸԱՅՐԵՆԻՔԵՆ

ԱՐԱԲԿԻՐԻ ՕՐԻՆԱԿԸ

Հնկտեմբերի վերջին շաբաթէն մինչեւ Նոյեմբերի կեսը բաւական մտահոգիչ կացութիւն ստեղծուած էր Երեւանի մէջ, երբ քանի մը քաղաքացիներ ըմպելի ջուրի ապակեանման պատճառով բազմաթիւ երեխաներ հիւանդացան ու բժշկական խնամքի կարիք ունեցան:

Արաբկիրը այդ քաղաքացիներէն մէկն էր: Մամուլը արագագնաց խիստ քննադատութեամբ եւ պատասխանատուները հաշուետուութեան կանչելու պահանջներով:

Անցաւ տագնապը: Մարեցաւ նաեւ այդ մասին աղմուկն ու մոռցուեցան պատասխանատուները երեւան հանելու եւ գանձը ձեռնով մը պատժելու պահանջները: Ասիկա սովորական երեւոյթ է Հայաստանի մէջ: Բողոքները միշտ կարճատեւ են եւ շուտ մոռցուող: Ճակատագրապաշտութիւնը եւ կամ իրարու յաջորդող մէկը միւսէն աւելի մեծ խնդիրները, որոնք միշտ անկախելի կը դարձնեն Գաղափար հարցերը ու տագնապները, թերեւս բացատրեն այս վիճակը: Մարդիկ նաեւ հաւատը չունին սեփական ուժին վրայ եւ անիմաստ նկատելով հարցերու հետապնդումը իրենց յոյսը կը զաննեն Աստուծոյ վրայ, այդ ձեւով ուղղակիօրէն խրախուսելով իրենց մարդկային տարրական իրաւունքները ոտնակոխողները՝ անոնց ներշնչելով անպատժելիութեան զգացումը:

Արաբկիրի շրջանին մէջ, սակայն, Հայ Յեղափոխական Դաշնակցութեան տեղւոյն «Կոմիտաս» կոմիտէն որոշած էր հետապնդել այս հարցը, շարունակել խնդրի արժանաւոր մեծ նոյնիսկ հատուցում կահանջել: Ջրային սնտեսութեան պետական կոմիտէն՝ տուժած քաղաքացիներուն հաշուոյն: «Կիմիտաս կոմիտէն իր սեփական միջոցներով կազմակերպած է գործը եւ հագար երկու արաբկիրցիներէ բողոք-դիմում հաւաքած է ներկայացուցած պետական պատկան մարմինին:

Այս անօրինակ քայլը ոգեւորիչ կը գտնեմ եւ կը շարունակեմ հետեւիլ անոր գարգացումներուն: Արաբկիրի կոմիտէն իւրաքանչիւր բողոքող բնակիչի համար ջուրի պատասխանատուներէն կը պահանջէ շուրջ 15 հազար դրամ՝ իբրեւ հատուցում՝ անհանգստացնող քան օրերու ընթացքին իր կրած վնասներուն, այսինքն՝ օրական վաթսուց իթր ջուր ետացնելու համար ծախսած ելեկտրականութեան գինն ու օրական հինգ լիթր շշացուած ջուրի փոխարժեքը:

Կան վաթսուցե անելի դիմողներ, որոնք ունին նաեւ հիւանդացան այցելած եւ բժշկական օգնութիւն ստացած ըլլալու փաստաթուղթ: Ջուրի պատասխանատուները արդէն զգաստացած կը թուին ըլլալ եւ բողոքողներուն հետ կապուելով կը փորձեն անելի փոքր գումարներ խոստանալով համարել գանձը եւ քաշելու իրենց դիմումները: Այս օրերուն ջրային սնտեսութեան պատասխանատուները պարտաւոր են պաշտօնապէս պատրաստել բողոք-դիմումներուն: Եթէ բողոքողներու պահանջներուն գոհացում չտրուի, գործը պիտի երթայ դատարան:

Յատկանշական պատեղ, անշուշտ, քաղաքացիներու շահերուն պաշտպանութեան կազմակերպուած մակարդակի վրայ տարուող գործն է՝ ոչ կառավարական մարմինի մը կողմէ, որ կը հաւատամ, հոգեբանական մեծ խթան կը հանդիսանայ հասարակ մարդուն, որ կրնայ ինքնին ընկերային վիճակի մէջ բարեփոխութիւն մտցնելու կարելիութիւնը մը վերածուել:

Անպաշտպանութեան թիւերը, միանկութեան զգացումը պէտք է արմատախիլ ընել քաղաքացիին ներաշխարհէն եւ այս գեղեցիկ օրինակը քայլ մըն է այդ ուղղութեամբ: Ամէն ինչ պէտք է ընել, որ այսօրինակ աշխատանքները խրախուսուին, անելի կազմակերպուին, դառնան անելի տարողունակ եւ ընդգրկուին, դառնան հզօր հասնելով ամէն տեղ ու պաշտպանելով սպառողին, քաղաքացիին կենսական շահերը:

Ես վստահ եմ, որ այսօր Հայաստանի մէջ քաղաքացիներուն իրաւունքներուն պաշտպանութեան անուան տակ գոյութիւն քարշ կու տան բազմաթիւ ոչ կառավարական կազմակերպութիւններ, որոնք միջազգային դրամաշնորհներ ալ ապահոված են, սակայն զբաղած են առանձնապէս այդ միջոցները միջոցառելու աշխատանքով: Նման կազմակերպութիւններու անգործութիւնը ժողովուրդին յուսահատութեան տանող ազդակներէն մէկն է արդէն:

Գրասենակ, իրաւաբանական մնացուած ծառայութիւն, խորհրդածութիւն, նիւթական բաւարար միջոցներ, այս ամէնը անհրաժեշտ են, սակայն ոչ բաւարար՝ այսպիսի աշխատանքի մը համար: Կարելի էր միջոցառելու մտայնութիւնը, քաջութիւնը, հետեւողականութիւնը եւ մատակարարութիւնը: Ոչ խղճամիտ, անելի ճիշդը, յանուն գրպանի շահի մարդոց կեանքը վտանգի ենթարկելու փորձութեան չի խորհող գործարարներէն մինչեւ պետական անպատասխանատու պաշտօնատարներ պէտք է մշտապէս իմանան, որ իրենց գործողութիւններէն յառաջ եկած վնասները, որոնք երբեմն կենցաղահարմար խնդիր կը ստեղծեն, անհետեւանք պիտի չմնան: Երեւակայեցէք, ուրեմն, թէ ինչ նշումներ կրնան ըլլալ նաեւ կառոյցի մը վրայ, սակայն, նաեւ ինչպիսի յոյսի փարոս կրնայ դառնալ ան՝ բազմաթիւ իրաւագրկեալ մարդոց համար:

Ես իմ կարողութեան չափով պիտի աշխատիմ այդ ուղղութեամբ, ընկերներուն հետ միասին:

ՓՈՒՌ ԻՇԽԱՆԵԱՆ

ՄՍՍԵՆՈՒԹ (ԼԵՀՄԱՃԻՆ)
ՊՍՏՈՒՄՆՈՒԹԻՆԸ ԵՐԿՐԱՐ ՏՐԻԵՆԵՐԸ Ի ԵՐ
ՄԵՐ ՄՍՍԵՆՈՒԹՆԵՐԸ
ԱՅՑԻ ԿԸ ՊՍՏՈՒՄՆՈՒԹՆԵՐԸ
«ՍՈՒ ՊԵՐԵԿ», «ՄՍՆԵՐ», ԵՒ ՍՈՒՆԿՈՎ ՄՍՍԵՆՈՒԹ

Չոքար Ե Պար, Ենտանիքի կից, Խեռ. 01-37-78 եւ 03-216012

ԴԱՇՆԱԿՅՈՒԹԵԱՆ ՕՐՈՒՄՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ ԳԱՀԻՐԷԻ ՄԷՋ

«Փորշել ենք փեսանի՜ որն է այսօրուայ Հայաստանի ու հայ ժողովրդի թոյլ կէտը, այդպիսի դժուր ենք մեր խրամապնները, այդպիսի դիրքաւորում ենք և այդպիսի փայլաւ ենք կոչիր»:

Ըստ Ընկ. Վ. Յովհաննիսեան

Հայ Յեղափոխական Դաշնակցութեան 113ամեակի հանդիսութիւնը տեղի ունեցաւ Հինգշաբթի, 18 Դեկտեմբեր 2003ի երեկոյեան ժամը 9:30ին, Հելլոպոլիտոյ «Յուսարբեր» ակումբի եւ «Լ. եւ Ս. Գարագաշեան» սրահին մէջ, կազմակերպութեամբ «Յուսարբեր» զոյգ ակումբներու վարչութեան եւ նախագահութեամբ ընկ. Վարուժան Գաղանճեանի եւ կողակցին: Օրուան պատգամաբերն էր Հ. Յ. Դ. Բիւրոյի անդամ, Հայաստանի Ազգային Ժողովի փոխ նախագահ ընկ. Վահան Յովհաննիսեան:

Հանդիսութեան ներկայ էին՝ Հայաստանի արտակարգ եւ լիազօր դեսպան Սերգէյ Մանասարեան, դեսպանատան աշխատակիցներ, Գահիրէի առաջնորդական փոխանորդ հայր Աշոտ վրդ. Մնացականեան, Գահիրէի հոգեւոր հովիւ Զեֆնո քահ. Բարսեղեան, Տաճատ արդ. Մատուրեան, Գարբիէլ արդ. Մարգարեան, Գահիրէի եւ Աղբթսանըրի թեմական ժողովներու ատենապետներ Անդրանիկ Մեսրոպեան եւ Լեւոն Գաղթացեան, Գահիրէի Բաղաբալան ժողովի ատենապետ Պերճ Թէրզեան, Ազգային Իշխանութեան անդամներ, մշակութային, կրթական, բարեփոխական հաստատութիւններու ներկայացուցիչներ, համակիրներ եւ ընկերներ:

Բեմի վրայ զետեղուած էր Դաշնակցութեան հիմնադիր երրորդութեան մեծագիւր գուռաւոր նկարը, կողքերուն՝ 1890-2003, իսկ ներքեւը՝ Յ. Օշականի խօսքը:

Յոտնկայս ունկնդրուեցան Եգիպտոսի եւ Հայաստանի հանրապետական օրհներգները:

Յանուն կազմակերպիչ մարմինն, բացման խօսքով հանդէս եկաւ ընկ. Ծանթ կապիշեան, որ խտացուած գոյներով ներկայացրնելով յորեկար կազմակերպութեան բնութագիրը՝ ծննդոցը, կազմակերպական հիմքերը, գաղափարաբանութեան էությունը, առաջադրանքներն ու նպատակները՝ հաստատելով, որ Դաշնակցութիւնը սկիզբէն իսկ առաւելաբար եղաւ գործի կուսակցութիւն, մեծանուն հրապարակագիր Վահան Նաւասարդեանէն մէջբերում կատարելով պատասխանեց իր իսկ դրած հարցադրման, թէ թէ ո՞ր է Դաշնակցութեան իսկական ուժին աղբիւրը: «Որ տասնամեակներ շարունակ՝ անընդհատ հետեւողականութեամբ ան կը կարենայ կատարել այս բոլորը»:

«Դաշնակցութեան ուժը Դաշնակցութեան մէջ է. այսինքն՝ իր Օրուանին կամ կանոնագրին կամ անունին կամ գինանշանին կամ դրօշին մէջ է՝ «պաշտօնական» Դաշնակցութեան մէջ է»:

«Դաշնակցութեան ուժը անպաշտօն Դաշնակցութեան մէջ է, այն կախարհիչ եւ շքեղ գանձին մէջ է, որ մեզ ծանօթ է «դաշնակցականութիւն» անունով:

«Իսկ այդ գանձը դիզեցին Դաշնակցութեան գաղափարները, Դաշնակցութեան բարբերը, Դաշնակցութեան գացուածները, Դաշնակցութեան գործերը եւ Դաշնակցութեան համակիրները»:

Ողջոյնի խօսքով հանդէս գալով, դեսպան Ս. Մանասարեան, նախեւառաջ յանուն Հայաստանի Հանրապետութեան շնորհաւորեց Դաշնակցութեան 113ամեակի հաստատեց, որ ներկայիս, թիկունք ունենալով անկախ եւ գերիշխան պետութիւն, «մենք բարձր հպարտութեամբ կարող ենք խօսել Դաշնակցութեան եւ այլ աւանդական կուսակցութիւնների դերին մասին, այն դերին՝ որ ունեցել են վերջիններս համահայկական գաղափարները պահպանելու եւ մեծ ծաւալի աշխատանք կատարելու»:

Դեսպանը նշելով, որ վերջնական դաճատական տրուած է կուսակցութիւններու գործունէութեան, թէ՛ Հայ գիտնականները մեծ աշխատանք ունին կատարելիք, ընդգծեց. «Բայց ակնյայտ է մի բան, թէ Հայաստանում, հիմնականը Հայաստանում արդէն, գերիշխող ուժ է դառնում պատմական ճշմարտութիւնը, եւ այն դերը եւ այն ճանապարհը, որ ունեցել ու անցել է Դաշնակցութիւնը՝ պահպանելով մեզ համար, մեզ բոլորին համար սուրբ արժէքները»: Ան կարեւոր նկատեց նաեւ Դաշնակցութեան հայաստանակեցրոն դառնալու պարագան, զայն «չատ կարեւոր գործ» բնութագրելով՝ հաւաստելով որ «քաղաքական դաշտը տեղափոխուել է Հայաստան»:

Դեսպանը Մանասարեան իր խօսքի շարունակութեան մէջ մատնանշեց Հայաստանի անդրանիկ Հանրապետութեան կարեւորութեան իւրաքանչեւ մէկ երեսը: Ան ըսաւ. «Այն ազգերը, այն ժողովուրդները, որոնք միջնադարում կամ մի քիչ աւելի ուշ կորցրեան են պետականութիւնը, շատ գոճարուցութեամբ են վերադառնում այդ գաղափարներին: Եւ այդ իսկ առումով, շատ կարեւոր է եւ անգնահատելի է Առաջին Հանրապետութեան գործը»: Ան իր խօսքը եզրափակեց դարձեալ շնորհաւորելով «Դաշնակցութեան Օրը»:

Գեղարուեստական յատագիրով, նախեւառաջ ներկայացուեցաւ Վարդան Գէորգեանի «Հ. Յ. Դաշնակցութեան» երկարաչուն շքեղ քերթուածը, զոր մեկնաբանեցին տիկիներ Սօսէ Կրպոյեան, Արաքսի Յովակիմեան, Թայլին Սագայեան եւ Սիլվա Ասատուրեան:

Եգիպտոսի պետական երաժշտանոցէն հրաւիրուած լարային քառեակը կատարեց ազգային-յեղափոխական երգեր՝ «Մենք անկեղծ գինուր ենք», «Ով որ քաջ է», «Ձայն տուր ով ֆիտայ», «Գնդակ որոտայ» եւ «Վէրքերով լի»: Ըստ մանայնի՝ յաջող գործիքաւորումով մեկնաբանութիւն մը, զոր հաճութով ունկնդրեց ներկայ հասարակութիւնը եւ գնահատեց զայն:

Գէորգ Էմինի «Երգ կուռնիկի մասին» քերթուածը ապրումով ասունընթաց ընկերուհի Նորա Քէօնէյեան:

Օրուան պատգամաբեր Հ. Յ. Դաշնակցութեան Բիւրոյի անդամ եւ Հայաստանի Ազգային Ժողովի փոխ նախագահ ընկեր Վահան Յովհաննիսեան, իր խօսքի մուտքին նշեց, թէ ամէն տարի այս Օրը տասնամեակներէ ի վեր կը նշուի աշխարհի տարածքին, Հայաստանի մէջ թէ Հայաստանէն դուրս, տարբեր օրերու, «բայց ամէն տարի մենք փորձում ենք հաշուետուութիւն տալ մեր ժողովրդին, որովհետեւ ո՛չ մի կուսակցութիւն իմաստ չունի, եթէ ապրում է ինքնիւր համար եւ իր գործունէութեան արդիւնքները մասին պարբերաբար չի զեկուցում սեփական ժողովրդին, բոլորին, կողմնափիցներին, բարեկամներին, համակիրներին, քաղաքական հակառորդներին»:

Նշելով, որ Դաշնակցութիւնը դասակարգային կուսակցութիւն էլ եղած ու էլ, այլ՝ ազգային, անցաւ իր բուն նիւթի նախաբանին՝ ներկայներուն յիշեցնելով Դաշնակցութեան բոլորին յայտնի, շատ պարզ եւ թափանցիկ նշանաբանը, որ սակայն «իր մէջ պարունակում է այն ամէնը, ինչի մասին երազել կարող է ցանկացած հայ՝ արտերկրում կամ Հայաստանում, Արցախում կամ Զաւախքում: Մենք ուզում ենք կերտել Ազա՛տ, Անկա՛խ եւ Միացեա՛լ Հայաստան»:

Ան պարզեց, թէ այս եզրերէն՝ ազատէն, անկախէն եւ միացեալէն իւրաքանչիւրը կ'իմաստաւորուի միւսներով, առանձնաբար արդիւնաւէտ չեն ըլլար, օրինակ բերելով, թէ ի՞նչ կ'արժէ Միացեալ Հայաստանը, երբ հայեր չեն ապրիր այնտեղ, ի՞նչ արժէք ունի Անկա՛խ Հայաստանը, եթէ ազատ չըլլայ, ղեկավարուի ցեղապաշտական, ոստիկանական վարչակարգով: Հաստատելով, որ Դաշնակցութիւնը հետամուտ է միասնաբար իրագործել այդ երեք հասկացութիւնները, նշեց, որ՝ «պատմութեան ցանկացած պահին հայ ժողովրդի առջեւ առաջնահերթ մէ՛կ խնդիր է կանգնում (...) Մէկ, մենք յայտնուում ենք մի վիճակի մէջ, երբ առաջնահերթը անկախութիւնն է, ժողովրդի անկախութիւնը, երկրի անկախութիւնը վերականգնելը, մէ՛կ Միացեալ Հայաստան կերտելը եւ այսպէ՛ս՝ շարունակաբար, փոխելով խնդիրը, յարմարուելով իրավիճակին, այո՛, պարտաւոր ենք դա անել, որովհետեւ ժամանակները, ինչպէս նկատել էք, փոխուել են (...) Մենք պիտի կարողանանք գտնել իւրաքանչիւր պահի համար ժամանակակից ու ճիշդ լուծում»:

Հիմնաւորելով իր խօսքը, ան ակնարկ մը նետեց մօտաւոր անցեալին՝ 10-12 տարի առաջուան հրամայականին: «Առաջնահերթ խնդիր էր Միացեալ Հայաստանի գաղափարը. դեռ Սովետական Միութեան ներքոյ, Արցախը ոտքի էր կանգնել պայքարի (...) Այդ փուլի համար անհրաժեշտ ու հնարաւոր Միացեալ Հայաստանը առաջնահերթ էր (...) Նշանակում էր, որ Դաշնակցութիւնը պիտի զուլիւր կախի, Հայաստանում ոչինչի՛ պիտի նայի, ամբողջ ուժերով պիտի Արցախին ծառայի»: Պատերազմին Դաշնակցութեան մարդկային կորուստի հաշուեկշիռը ներկայացնելի ետք, անցնւմ կատարեց դէպի Հայաստանի անկախացում փուլը, երբ՝ «մենք պիտի կարողանայինք մեր ինքնուրոյնութիւնը չկորցնել, ստեղծել՝ ինչպէս ասաց պրն. դեսպանը, ինքնիքան պետութիւն: Եւ ամէն ինչ ծառայեցրեցինք դրան»:

Ներկայի փուլը ան բնորոշեց Ազա՛տ Հայաստանի կերտման փուլը: «Այսօր Ազա՛տ Հայաստանի ժամանակ է եկել եւ այդ այ պիտի կարողանանք կերտել: (...) Եթէ մենք այսօր չկարողանանք Ազա՛տ Հայաստան ստեղծել, մենք կարող ենք կորցնել այն, ինչ ձեռք բերեցինք պայքարելով Միացեալի համար, մենք կարող ենք գիշել մեր անկախութեան որոշ մասը»: Պարզելով իր միտքը, ան յայտնեց, թէ աշխարհը շատ արագ կը փոխուի եւ այսօրուան աշխարհի կանոններով՝ միայն ազա՛տ հասարակարգ կրնայ է հասարակարգէ աշխատիլ աշխարհի հօրներուն հետ, «պահպանելով իր ինքնուրոյնութիւնը եւ ամենակարեւորը՝ իր ազգային շահերը», այսինքն՝ Հայաստանի պարագային, Միացեալի նուաճումը, Ղարաբաղը, իսկ կորնացնելով Ղարաբաղը, դժուար կը դառնայ պահել Հայաստանի ինքնուրոյնութիւնը: «Այս փոխկապակցութեան մէջ, այս դժուարութիւնների մէջ, Հայաստանի բոլոր կուսակցութիւնները, բայց առաջին հերթին մենք, դա մեր պարտքն ենք համարում, պարտաւոր ենք ճիշտ ճանապարհ ընտրել»:

Սահմանելէ առաջ այն դերն ու ճանապարհը, զոր Դաշնակցութիւնը ընտրած է իրեն համար, ան ցաւով նկատեց, որ՝ «այն տարիները, որոնք մենք կարող էինք որպէս ազգ եւ պետութիւն շատ աւելի արդիւնաւէտ օգտագործել՝ Հայաստանը աւելի բարեկեցիկ դարձնելու, ամբապնդելու համար, մենք ցաւօք սրտի, կորցրեցինք ներքին բանավեճերի եւ բախումների վրայ», եւ նկատելով, որ հայ ժողովուրդը ուրիշներու սխալներով չի սորվիր, կը սորվի ի՛ր սխալներէն, ցանկալի նկատեց հնարաւորին չափ քիչ սխալներ ընել:

Ընկ. Յովհաննիսեան յայտնելէ ետք, թէ քանի մը խնդիրներ դրուած են, ամբապնդելու համար ազգային մեր անվտանգութիւնը, յարեց. «Նախեւառաջ, մենք պէտք է հասկանանք՝ ո՞րն է մեր անվտանգութիւնը: Ի վերջոյ ցանկացած ազգային անվտանգութիւն բաղկացուցիչ մասեր ունի: Որո՞նք են դրանք Հայաստանի համար, ո՞րն է Հայաստանի ազգային շահը եւ ո՞րն է Հայաստանի շահը ապագայում»:

Առաջին հերթին ան կարեւոր նկատեց ուրուագծումը, թէ ինչպիսի՛ Հայաստան կը պատկերացնենք 15, 50, 150 տարի ետք, զայն կոչելով «ազգային իրզի, ազգային տեսլականի ձեւաւորում», ինչ անցարեւելի կը պակսի հայ ազգին. «Մեզ մօտ ցաւօք սրտի դեռ չեն տարտեղ վեճերը նպատակի՛ մասին, ո՛չ թէ ճանապարհներով», ինչ որ «յուրը խնդիր» նկատեց, որ առկայ է թէ՛ Հայաստանի մէջ եւ թէ՛ Սփիւռքի տարածքին:

Երկրորդ, նկարագրելով Հայաստանի արագ եւ մեծ՝ 11-12 տոկոսի տարեկան տնտեսական աճը, որ սակայն ժողովրդային լայն զանգուածներու բարեկեցութեան չ'առաջնորդեք, ան մատնանշեց ընկերային արդարութեան անբաւարարութիւնը Հայաստանի մէջ՝ զայն նկատելով ազգային անվտանգութեան հիմնական սպառնալիք: «Ուրեմն, սա մեր երկրորդ խնդիրն է կարողանալ հաւասարակշիւութիւն մտցնել մեր հասարակութեան մէջ: Մենք գիշել ենք այդ հաւասարակշիւութիւնը յանուն արագ աճի, բայց ինչ որ ժամանակ յետոյ հաւասարակշիւութիւնը կարող է խախտուել եւ մենք պիտի յայտնուենք բաւականին դժուար ժամանակի մէջ»:

Երկրորդ հիմնական խնդիրը՝ ստուգելու տնտեսութիւնն ու կաշառակերութիւնը մատնացոյց ըրաւ ընկ. Վ. Յովհաննիսեան, ըսելով. «Ո՛չ մի քաղաքական լուծում, ո՛չ մի տնտեսական լուծում, ո՛չ մի ընկերային քաղաքականութիւն եւ արդարութիւն հնարաւոր չի մի երկրում, որտեւ ըստերային տնտեսութիւնն ու կաշառակերութիւնը կազմում են բարձր տոկոս: Ժամանակային եւ տարածքային համեմատութիւններ կատարելով եւ նշելով, որ Հայաստան շատ աւելի լաւ դիրքի մէջ կը գտնուի ներկայիս քան 10,7 կամ 5 տարի առաջ, թէ անհամեմատ աւելի լաւ վիճակի մէջ է շրջանային բոլոր դրացիներուն յարաբերաբար, անհարաւոր գտաւ համեմատութիւնը անվերջ այս սահմաններուն մէջ կատարելը: Մենք պէտք է արդէն ուրիշ համեմատութիւններ գտնենք մեզ համար, եւ ի հարկէ այդտեղ մենք կը տեսնենք, որ շատ էլ շահեկան չի մեր վիճակը, համեմատած՝ օրինակ, եւրոպական երկրներին: Եւ ուրեմն պարզ է, որ սա պէտք է դառնայ հիմնական թիրախ»:

Դաշնակցութեան արդի քաղաքական գործունէութեան հիմնական ոլորտները նշելէ ետք, ան նկարագրեց զանոնք իրականացնելու համար ընտրուած լծակները:

Ա. Ազգային անվտանգութեան խորհուրդի ստեղծում, որուն ուղղութեամբ աշխատանք էր տարուի Հայաստանի նախագահին հետ, եւ նախատեսուած էր անցնալ Փետրուարին հանրաքուէի դրուած եւ չանցած Սահմանադրական փոփոխութիւններու

ծրարին մէջ: Խորհուրդ՝ «որ հիմնականից պիտի ուրուագծի այն Հայաստանը, որում ուզում ենք ապրել: Այսօր Հայաստանում որեւէ քաղաքական գործչի հարցէք, անկախ թէ ո՞ր կուսակցութիւնից, եւ նա ձեռք չի աքի՛ 30 տարի յետոյ Հայաստանը ի՞նչ սահմանների մէջ կը լինի, նա ձեռք չի աքի՛ ի՞նչ բնակչութիւն կարող է Հայաստանը պահել եղած տարածքներում, նա չի աքի ձեռք՝ ի՞նչպէս պիտի մենք վերջապէս լուծենք դէպի ծով մեր դուրս գալու ելքը (...) որովհետեւ այդ ամէնը մշակել է պէտք: Սա մէկ ուղղութիւն: Սրանով աշխատում է Դաշնակցութիւնը»:

Բ. Ընկերային արդարութեան խնդրի լուծում: Այս ուղղութեամբ, յարգելի ընկերը նշելով, որ Դաշնակցութիւնը՝ միակը խորհրդային նախկին հանրապետութիւններու կուսակցութիւններուն մէջ, Ընկերվար Միջազգայնականի լիիրաւ անդամ դարձած է եւ այդ հանգամանքը պիտի կարենայ ծառայեցնել Հայաստանի եւ հայ ժողովուրդին համար, իր հետ խորհրդարան տարած է լուծումներ, որոնք մարդկութեան տասնամեակներու պայքարի ու մտքի աշխատանքով մշակուած են եւ պէտք է շրջանցուին Հայաստանի մէջ: «Մենք բերում ենք այդ օրէնքները եւ դժուարութեամբ, դժուարութեամբ՝ բայց դրանք սկսում են հակակաւ խորհրդարանում լսուել, հասկացուել, քուէարկուել»:

Գ. Կաշառակերութեան ու փտածութեան դէմ պայքար: Դաշնակցութեան հիմնական թիրախ որպէս, ըսաւ ընկեր Յովհաննիսեան, արդէն քանի տարի է կ'աշխատի կուսակցութիւնը եւ առայսօր քանի մը յստակ նշանակէտերու հասած է:

1- Հայաստան մշակած է փտածութեան դէմ պայքարի ռազմավարութիւն, միջազգային օգնութեամբ, որ իր նմանը չունի դրացի երկիրներու մէջ:

2- Երկուս մամա առաջ, Հայաստանի նախագահ ռազմավարական այդ ծրագիրը իրականացնելու համար յատուկ խորհրդական նշանակած է դաշնակցական ընկերը (Բագրատ Եսայեան): 3- Ազգային ժողովը, երկար բանավեճերէ ետք վերջապէս ստեղծած է յատուկ յանձնախումբ, որ պիտի ուսումնասիրէ արտասահմանեան պետութիւններու կողմէ Հայաստանի ստրուած բոլոր վարկերուն, դրամաշնորհներուն եւ մարդասիրական օգնութեան օգտագործման արդիւնաւէտութիւնը, որուն ղեկավարը նոյնպէս դաշնակցական է, (Վահան Յովհաննիսեան):

«Այսինքն, մենք փորձել ենք տեսնել՝ ո՞րն է այսօրուան Հայաստանի ու հայ ժողովրդի թոյլ կէտը, այդտեղ դնում ենք մեր խրամատները, այդտեղ դիրքաւորում ենք եւ այդտեղ տալիս ենք կոչիւր: Սա է մեր հիմնական անելիքը այսօրուան Հայաստանում», ըսաւ ընկ. Յովհաննիսեան, բացատրելով Դաշնակցութեան ներկայ գործունէութեան տրամաբանութիւնը:

Բանախօս ընկերը յստակացնելով, թէ ի վերջոյ դատարկութեան մէջ է, որ գործէ Դաշնակցութիւնը, այլ հասարակութեան մէջ, որ ունի այսպէս խորհող կուսակցութիւններ, քաղաքական շրջանակներ, որոնք հետ հարկ է աշխատել, «որովհետեւ մենք չենք միայն տղայնահաւորը, որ այս ամէն ինչը հասկանում է: Մենք ուղղակի փորձ ունենք՝ աւելի շատ, մենք ուղղակի աւելի երկար ենք գոյատեւում որպէս կուսակցութիւն եւ միջազգային փորձը մեր աւելի հարուստ է: Մենք այն ուզում ենք ծառայեցնել ժողովրդին, բայց այդ ժողովուրդը պիտի մասնակից լինի այս պայքարին»: Այս ծիրին մէջ են դիտել տուաւ, որ խորհրդարանական ընտրութիւններուն հետեւած՝ խորհրդածութեան մղող երեւոյթ է համայնավարներու ի սպառ բացակայութիւնը Հայաստանի խորհրդարանին մէջ, առաջին անգամ ըլլալով, ուր անոնք ներկայ էին Ա. Հանրապետութեան օրերէն: յայտնապէս ակնարկելով ժամանակավրէպ դառնալու վտանգներուն:

Անցնելով յետընտրական աշխատանքներուն, ընկեր Յովհաննիսեան ներկայացուց Հանրապետական, «Օրինաց Երկիր» կուսակցութիւններուն եւ Դաշնակցութեան մասնակցութեամբ հասամայնական կառավարական ստեղծումն ու հետագայ աշխատանքը ընթացքը: Յայտնելով, որ՝ «չատ ու շատ հարցերի շուրջ կան վեճեր, կան անհամաձայնութեան կէտեր», աւելցուց. «Մենք հասկացել ենք, որ երկրի առաջ կանգնած խնդիրները լուծման արդէն կարիքը ունեն», թէ՛ այլեւս ամօթ է թերութիւնները վերագրել պետութեան «նորակախ» կամ «ներաստեղծ» ըլլալուն: Ընդգծելով, որ յանգած են այն եզրակացութեան, որ Հայաստան արդէն լիիրաւ պետութիւն է եւ ժամանակն է ժողովուրդին դաստիարակել, որ այս անկախութիւնը յաւերժ է, ճիշդ ճամբուն վրայ է, համաձայնական դաշինքը կողմերը ընդգծած են արագ զարգացման եւ ժողովուրդին բարեկեցութեան որոշ մակարդակ ապահովելու հրամայականը, իսկ մնացեալ խնդիրները յետաձգելով հետագային: Յայտնելով, թէ համաձայնական դաշինքի մէջ քանի մը խնդիր արդէն յաջողած են լուծել, բերաւ յիշեալ կուսակցութիւններուն միջեւ ստորագրուած յուշագրի օրինակը, որով բոլոր լուրջ պաշտօններուն նշանակուած պիտի կատարուի բոլորին համաձայնութեամբ, առաջն առնելու համար կաշառքով, ծանօթ-միջնորդով կամ հաճոյանալով պաշտօնի կոչուելու ձեւերուն:

Ապացուցելով որ Հայաստան կայուն եւ հաստատ պետականութիւն է, որ Հոկտեմբեր 27ի նման ծանր ողբերգութեան ցնցումը կրցաւ յաղթահարել, ընկեր Յովհաննիսեան իր խօսքը եզրափակեց ըսելով.

«Ես կարծում եմ՝ մենք սկսել ենք ապրել մի երկրում, որով կառելի է հպարտանալ: Ես դա անում եմ: Եւ յուսով եմ՝ դուք էլ»:

Յաջողութեամբ քոթէյլ-ընդունելութեան ընթացքին, օրուան նախագահին եւ ընկերներուն հետ, ընկ. Վ. Յովհաննիսեան հատեց Դաշնակցութեան 113ամեակի կարկանդակը:

Հասարակութիւնը բաժնուեցաւ հանդիսասրահէն հայրենիքի եւ հայ ժողովուրդի վաղուքի օրուան նկատմամբ ամբապնդող լոյս հաւատով:

Չ. Լ.

ԾԱՆՈՒՅՈՒՆՆԵ

Միջապգային Քաղաքական Կեանք

ՔԱՐԻՒՂԻ ՕՏԱՐ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԱՒԵԼԻ ՔԱՆ 500 ՄԻԼԻՈՆ ՏՈԼԱՐԻ ՎՆԱՍ՝ ԱԶՐՊԷՅԾԱՆԻ ՄԷԶ

Դեկտեմբերի սկիզբը Ազրպեյձանի քարիւղի պետական ընկերության («Սոքար») նախագահ Նաթիգ Ալիևի խորհրդարանին մէջ յայտարարեց, թէ քարիւղի օտար ընկերութիւններ կորսնցուցած են ազրպեյձանական քարիւղի հանքերը պեղելու ծրագիրներուն մէջ ներդրուած 500 միլիոն տոլար: «Օտար ընկերութիւնները մարդիկ արդի չափանիշներուն համար չափաանոյ կատարուած են արդէն քարիւղի շարք մը հանքերու համար եւ հորերը փորուած են: Կարգ մը պարագաներու քարիւղ յայտնաբերուեցաւ, սակայն զանազան պատճառներով մեր օտար գործընկերները մերժեցին շարունակել գործը: Իրրեւ արդիւնք, ընկերութիւնները աւելի քան 500 միլիոն տոլար վնասեցին», նշեց Ալիև:

Օտար ընկերութիւնները ամէն ծրագրումները ըրին արտադրութիւնը բաժնեկցելու համար չափաանոյ գործընկերներով մեր օտար գործընկերները մերժեցին շարունակել գործը: Իրրեւ արդիւնք, ընկերութիւնները աւելի քան 500 միլիոն տոլար վնասեցին», նշեց Ալիև:

Օտար ընկերութիւնները ամէն ծրագրումները ըրին արտադրութիւնը բաժնեկցելու համար չափաանոյ գործընկերներով մեր օտար գործընկերները մերժեցին շարունակել գործը: Իրրեւ արդիւնք, ընկերութիւնները աւելի քան 500 միլիոն տոլար վնասեցին», նշեց Ալիև:

- 1) Գարապաղի հանք - 10 Նոյեմբեր 1995 - «Պեն-դիւն», ընկերութիւնները աւելի քան 500 միլիոն տոլար վնասեցին»;
- 2) Արաֆի - Տան Ուլ-տիւզու, 14 Դեկտեմբեր 1996 - «Ամոք» (Միացեալ Նահանգներ):
- 3) Լանքարան - Թալիս Տանիզ - 13 Յունուար 1997 - «Էլֆ» (Յարանա):
- 4) Օկիւզի հանք - 1 Օգոստոս 1997 - «Էքսոն» (Միացեալ Նահանգներ):
- 5) Աչքերոնի հանք - 1 Օգոստոս 1997 - «Շելլ» (Միացեալ Նահանգներ):
- 6) Քիւրտասի - 2 Յունիս 1998 - «Ակիմի» (Իտալիա):
- 7) Միւրտագանլի - 21 Յունիս 1998 - «Ռամբո» (Բրիտանիա):
- 8) Աթասկա - 25 Դեկտեմբեր 1998 - «Ճափէքս» (Ճափոն):

4րդ տեսնենք, որ ամերիկեան ընկերութիւններն են մեծագոյն տուժողները Ազրպեյձանի հետ քարիւղի

ծրագիրներ նախաձեռնողներուն մէջ: «Շելլ»-ը ամէնէն աւելի մտնողը կը սեպտեմբեր, որովհետեւ հետեւի հետեւի 78 միլիոն տոլար ներդրած է միայն մէկ հոր բանալու համար: Սակայն, հակառակ իրենց բոլոր ընկերութիւններուն ձախողութիւններուն, Միացեալ Նահանգներ տակաւին կը մնան Ազրպեյձանի արտաքին, ներքին, տնտեսական եւ ուժանիւթի մարզերուն մէջ քաղաքականութիւնը ճշդողի դերին մէջ: Ըստ երեւոյթի, այդ պատճառով է որ Ազրպեյձանի հետ որեւէ տնտեսական շահաւէտ ծրագիր կը դիտուի իբրեւ «քաղաքական» եւ «ամերիկամէտ» (ներառեալ Պաքո - Թիֆլիս - ձէյձան քարիւղատարը, որուն տարեկան շահը կ'ակնկալուի որ 12,5 առ հարիւր ըլլայ):

ԵՐՈՊԱՑԻՔ ԽՍՏԱՊԱՀԱՆՁ՝ ԱԶՐՊԷՅԾԱՆԻ ՍՏԱՆՁՆԱԾ ՊԱՐՏԱԻՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ԿԱՏՄԱՄԲ

Մարդկային իրաւանց պաշտպանութեան Նորվեգիական հիմնադրամը մտահոգութիւն յայտնած է Ազրպեյձանի մէջ մարդկային իրաւանց եւ ազատութիւններու կացութեան վատթարացման առնչուածութեամբ: Օսլոյի մէջ վերջերս տեղի ունեցած սեմինարի մը ընթացքին, որ նուիրուած էր Ազրպեյձանի մէջ յետընտրական զարգացումներուն, հիմնադրամի վարչութեան անդամ Մեթթէ Նեւզ միջազգային ընտանիքին կոչ ուղղած է Ազրպեյձանի մէջ մարդկային իրաւանց իրավիճակին վատթարացման գծով քայլեր առնել: Ան դիտել տուած է, թէ 2004ին Նորվեգիա պիտի ստանձնէ Եւրոպական խորհուրդի գարնանային եւ աշնանային նստաշրջաններուն նախագահութիւնը, եւ իր պարտքը պիտի նկատէ Ազրպեյձանի կառավարութեան յիշեցնել Եւրոպական խորհուրդին նկատմամբ Ազրպեյձանի ստանձնած պարտաւորութիւններու հարցը:



Սեմինարը կազմակերպուած էր վերոնշեալ հիմնադրամին եւ Նորվեգիոյ արտաքին գործոց նախարարութեան համագործակցութեամբ: Նորվեգիոյ արտաքին գործոց փոխ նախարար Կիմ Թրաապիթը սեմինարին ընթացքին իր խօսքին մէջ յայտնած է, թէ Նորվեգիոյ կառավարութիւնը արդէն լուրջ մտահոգութիւն է Ազրպեյձանի իրավիճակին առնչուած: «Միջազգային ընտանիքին համբերութիւնը կը սպառուի», շեշտած է Թրաապիթը:

Սեմինարը կազմակերպուած էր վերոնշեալ հիմնադրամին եւ Նորվեգիոյ արտաքին գործոց նախարարութեան համագործակցութեամբ: Նորվեգիոյ արտաքին գործոց փոխ նախարար Կիմ Թրաապիթը սեմինարին ընթացքին իր խօսքին մէջ յայտնած է, թէ Նորվեգիոյ կառավարութիւնը արդէն լուրջ մտահոգութիւն է Ազրպեյձանի իրավիճակին առնչուած: «Միջազգային ընտանիքին համբերութիւնը կը սպառուի», շեշտած է Թրաապիթը:

ԱԶՐՊԷՅԾԱՆ ԿԸ ԴԱՍՈՒԻ «ՈՉ ԱԶԱՏ ԵՐԿԻՐՆԵՐՈՒՆ» ՇԱՐՔԻՆ

Ամերիկեան իրաւաբանական «Ֆրիտըմ հաուս» ազդեցիկ կազմակերպութիւնը վերջերս հրատարակեց աշխարհի երկիրներուն մէջ ազատութիւններու մասին իր 2003ի տեղեկագիրը եւ այդ առումով երկիրներուն դասակարգումը:

Ազրպեյձան, 49 ալ երկիրներու շարքին, դասուեցաւ «ոչ ազատ» երկիրներու շարքին: Անցեալ տարի Ազրպեյձան մաս կազմած էր «մասամբ ազատ» երկիրներու խմբակին, այսուհետեւ, Ազրպեյձանի նախագահական ընտրութիւններուն (15 Հոկտեմբեր) արձանագրուած խախտումներուն եւ յետընտրական իրավիճակին լոյսին տակ Ազրպեյձան նահանջեց:

Տեղեկագիրին համաձայն, 88 երկիրներ կը նկատուին ազատ, իսկ 55 երկիրներ՝ «մասամբ ազատ»: Նախկին խորհրդային երկիրներէն Պալմեան երկիրները նկատուած են «ազատ», Հայաստանը, Վրաստանը, Ռուսիան, Ուքրանիան եւ Մոլդովիան՝ «մասամբ ազատ»: Պիլիպիններ, Ղազախստանը, Նիւ Զիլանդիան, Տաիվանը, Թուրքմենիստանը եւ Ուզբեքիստանը կը նկատուին «ոչ ազատ»:

Լեռնային Ղարաբաղ, որ «Ֆրիտըմ հաուս»-ի կողմէ նկատուած է իբրեւ Ազրպեյձանի մաս կազմող միաւոր, դասուած է «մասամբ ազատ»:

ՄԱՀԱՑՈՒ ՄԷՐ

Ղուճկն ետք: ... ԱԶՐՊԷՅԾԱՆՑԻ ՊԱՏԳԱՄԱՒՈՐԸ ՔԱՄԻՔԱԶ
Լեռնային Ղարաբաղի «ազատագրման» համար Ազրպեյձանի Միլի Մեծի (խորհրդարան) պատգամաւոր մը պատու տ է անձնասպանական գործողութիւն կատարող (Քամիքազ) դառնալ: «Ռեկոնստրուկտիւ» լրատու գործակալութիւնը կը հատի միջին քաղաքի թուրք բնակիչ Ազիզ Գորպանովին քիչ քիչ կախած է 15 Դեկտեմբերին, Ալիբեի թանի արտահերթ նիստին ընթացքին, իշխող «Ենի Ազըրպեյձան» կուսակցութեան անդամ Ասիա Մանաֆովա յայտնարարած է. «Հայտար Ալիբեի նկատմամբ մեր պարտքը հատուցելու համար ժողովուրդը պէտք է ազատագրէ Ղարաբաղը: Այդ նպատակին համար մենք պատրաստ ենք կիրարկել չեչէն հայրենասիրութիւններու մարտավարութիւնը՝ դիմել շեփտական գործողութիւններու»: Ասիա Մանաֆովա միւս խորհրդարանականներուն կոչ ուղղած է Քամիքազ դառնալ:

ՊՈԼՍՈՅ ԹԻՐԱՆՆԵՐՈՒ ՎՐԱՅ ՅԱՐՁԱԿԵՆՈՒ ՓՈՒՆԱՐԵՆ

ՊԸՆ ԼԱՏԷՆ ՓԱՓԱՔ ՅԱՅՏՆԱԾ Է ԻՆՃԻՐԼԻՔԻ ԽԱՐԻՍԽԻՆ ՎՐԱՅ ՅԱՐՁԱԿԻԼ


Թրքական գաղտնի սպասարկութեան տրեւեալներուն համաձայն, «Քալիտա» կազմակերպութեան ղեկավար Ուսամա Պըն Լատէն թուրքիոյ մէջ տեղի ունեցած յարձակումներուն շուրջ խորհրդարանական ընթացքին շեշտած է, թէ յարձակումները պէտք է տեղի ունենան ամերիկեան թիրախներուն դէմ: Ան շեշտած է յատկապէս Ինճիրլիքի ամերիկեան խարիսխին վրայ յարձակելու կարեւորութիւնը: Սակայն, որովհետեւ խարիսխը խիստ հսկողութեան տակ կը գտնուէր, կազմակերպիչ որոշած են նուազ պաշտպանուած հրէական սինակներու, բրիտանական հիւպատոսարանին եւ բրիտանական դրամատան մը դէմ յարձակումներ կատարել:



Մասը իսլամներ էին: Թուրքիոյ գաղտնի սպասարկութիւնը այս տեղեկութիւնները քաղած է յարձակումներ կազմակերպելու յանցանքով ամբաստանուած թուրք կասկածելիներէն:

Սակայն, որովհետեւ խարիսխը խիստ հսկողութեան տակ կը գտնուէր, կազմակերպիչ որոշած են նուազ պաշտպանուած հրէական սինակներու, բրիտանական հիւպատոսարանին եւ բրիտանական դրամատան մը դէմ յարձակումներ կատարել:

ԱԼԻԵԻ 3ՈՒՂԱՐԿԱԻՐՈՒԹԻՒՆԸ



ԱՅԿԱԿԱՆ ԳԱՂՈՒԹՆԵՐ

Նախորդ յօդուածով սկսած էինք ներկայացընել իտալահայ գաղութին ժ.Չ. դարու ժամանակաշրջանը, գոր շարունակելով՝ կը ներկայացընենք նոյն շրջանին վենետիկի հայ համայնքին ապրած հոլովոյթը:

ՎԵՆԵՏԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՎԵՐԱՇՆՈՒԹԱՅՈՒՄԸ

Քաղաքական պայմաններու բերումով Հայաստանէն ծայր առած գաղթականական հոսանքներուն բերումով ժ.Չ. դարու կէսերուն սկսաւ վերաշխուժանալ յատկապէս Վենետիկի հայ համայնքը: Մինչեւ այդ ժամանակ գլխաւորաբար կ'իլիկեցի, վանեցի եւ ատրպատականցի ընտրանքներ կային հոն. բայց այնուհետեւ Արցախէն եւ յատկապէս Նախիջևեանէն ու Ջուղայէն (հին Ջուղայ) մեծ թիւով ընտանիքներ գացին եւ բնակութիւն հաստատեցին հոն:

Այսպէս, ժ.Չ. դարու սկիզբը Ջուղայեցի քանի մը հայեր՝ Գասպար, Ջաքար, Սիմոն եւ Գէորգ Վենետիկի մէջ բնակութիւն հաստատեցին. անոնք յիշուած են Մարչիանայի դիւաններուն 1530ի արձանագրութիւններուն մէջ: Այնուհետեւ 1560ական տարիներուն բազմաթիւ այլ Ջուղայեցիներ հետեւեցան անոնց, որոնք մեծ մասամբ Սանթա Մարիա Ֆորմոզա (Սուրբ Մարիամ Ողորտիկ) եկեղեցիէն դէպի հարաւ, մինչեւ Կալլէ Տելլա Գորոնա եւ Լա Սալիցատա Ջոր-

ժիախտի տուփերու երկաթեայ ամաններ, ներքին սպիտակեղէն, մետաքսեայ գուլպաներ եւ անկողինի ձիւնի նման ճերմակ ընտիր սպիտակեղէն:

Մեջբերմի մնայուն յաճախողներէն յիշենք Վերոնիքա Ֆրանչոն, որ մեծ հռչակ կը վայելէր թէ՛ Վենետիկի եւ թէ՛ ամբողջ Եւրոպայի արքունիքներուն մէջ եւ ազնուականներուն մօտ, եւ Ֆրանսայի ու Լեհաստանի թագաւորներուն անձնակազմի սիրականն էր:

Իտալիոյ մէջ հին ժամանակներէն հայեր տարածած էին բուստի մշակման ձեւերը, որոնցմէ կը պատրաստէին թալիսմաններ, վզնոցներ, ոսկիէ թանկարժէք շրջանակով գնդաճեղի զարդագամեր եւ այլն: Սակայն հետագային, Վենետիկի հանրապետութեան հրապարակած օրէնքին համաձայն, թանկագին մետաղներու հետ կապուած բոլոր աշխատանքները եւ առեւտուրը վենետիկցիներուն վերապահուեցան: Ժ.Չ. դարու կէսերուն արգելք վերցուեցաւ եւ կրկին անգամ իրականութեամբ օտարներուն զբաղելու թանկագին մետաղներու հետ կապուած աշխատանքներով:


Այս պայմաններուն տակ Մարկոս Ջանդարեան մեկնեցաւ Վենետիկ՝ հոն բուստի, սաթի եւ ոսկեղէնի վերաբերեալ առեւտրական իր գործունէութիւնները ընդլայնելու համար. ան 1592ին Ռիալտո կամուրջին վրայ վաճառատուն մը գնեց եւ իր գաւկիին հետ միասնաբար փայլուն յաջողութիւններ արձանագրեց:

Յովսէփ Եւստիւսի Վենետիկի իշխանութիւններէն բացառել արտօնութիւն ստացաւ Սուրբ Մարկոսի հրապարակի գանձակատան մօտ փանչօ (վենետիկցիներուն վերապահուած վրան) ունենալ՝ ապրանքներ ծախելու համար: Եւստիւսիները ծուլեցան թաղամասին մէջ կը բնակէին եւ ամէն տարի Համբարձման տօնին կատարուող վենետիկցիներու ծովային տօնախմբութեան համար գործուող սպիտակ կտուրի կապոցներ կը նուիրէին: Իբրեւ երախտագիտութիւն՝ վենետիկցիք այսպիսի առանձնաշնորհում մը ըրին ընտանիքի պետին՝ Յովսէփին հասնելու:

Մենահարուստ հայ առեւտրականները մեծ դեր ունեցան Վենետիկի բարգաւաճման ու հարստացման մէջ, որովհետեւ իրենց հսկայական շահէն այլեւայլ տուրքեր եւ ծովային ուցիւմաքային ներածումի արտածումի համար վճարուող մաքսով մեծ գումարներ կը մուծէին պետական գանձարկը: Վենետիկցիք, գնահատելով անոնց արժանիքները եւ նկատի ունենալով անոնց դերը պետութեան տնտեսութեան մէջ՝ Սուրբ Մարկոսի հրապարակին վրայ խանութներ բանալու իրականութեան հայերուն: Այդ խանութներուն մէջ անոնք զարգացուցին յատկապէս մարդարիտի, յաղամանդի եւ սուտակի առեւտուրը: Հոն կեդրոնացած առեւտրականներէն յիշենք Մաւեանները, իսկ նոր ժամանակներուն՝ Թորքաճեանները:

Վենետիկի մէջ ներկայացուցիչներ եւ մասնաճիւղեր ունէին նաեւ Լեհաստանի, Ֆրանսայի,

ՎԵՆԵՏԻԿԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԸ ԺՉ. - ԺԷ. ԴԱՐԵՐՈՒՆ



Վենետիկ. Սուրբ Մարկոսի տաճարը, հրապարակը, տոճերու պալատը եւ իրն մտնեցողաբանը

Ռուսիոյ, Պարսկաստանի եւ այլ երկիրներու մէջ կեդրոնացած հայ վաճառականներ:

ԾՈՒՅՅԱԿ ԹԱՂԱՄԱՍԻՆ ՄԵՋ ԿԵԴՐՈՆԱՅԱԾ ՀԱՅ ԸՆՏԱՆԻՔՆԵՐ

Վենետիկի եւ յատկապէս ծուլեցի թաղամասին մէջ կեդրոնացած եւ ժամանակի ընթացքին բազմացած ընտանիքներէն յիշենք Գիորաք Միրմանները, որոնք 1588ին առեւտրական տուն բացին հոն (որ իր գոյութիւնը պահեց մինչեւ 1750), Եւստիւսիները, Եւստիւսիները (Եւստիւսի), Դաւիթեանները (վանեցի Ստեփան Դաւիթեանի գերդաստանը), Պետրոս Սինանեանները, Մարտիրոսեանները, Ջանդ Աղամիրի սերունդը եւ դափանցի Նահապետեանները: Աւելի ուշ ժամանակ հոն հաստատուեցան շոտլանդացի Առաքել Քարանձվեցեանի ընտանիքը, Նորատունկեանները, պոլսեցի Ալեքսանեանները եւ այլք: Այս բոլորը ընտանիքներն ալ տարբեր ժամանակներ առեւտրական տուններ բացին, որոնցմէ ոմանք գոյատևեցին մինչեւ ԺԷ. դարու վերջերը: Վերջին անգամ՝ 1800ին փակուեցաւ Ալեքսանեան առեւտրական տունը:

Մեծ հռչակ ու հեղինակութիւն ունէին մասնաւանդ կեսարացի թէյոգորեանները, Գէորգ Թէյոգորեանի սերունդը: Անոնք թէ՛ առեւտրականներ եւ թէ՛ հողատէրեր էին: Անոնց կալուածները տարածուած էին քաղաքէն բաւական հեռու. այդ հողերը անոնց սեփականութիւնը մնաց մօտաւորապէս 120 տարի:

ՎԵՆԵՏԻԿԻ ԻՏԱԼԻՈՅ ԱՄԵՆԵՆ ՀԱՅԱՇՈՒՄ ԲԱՂԱՔԸ

Վենետիկ ժամանակի ընթացքին դարձաւ իտալիոյ ամէնէն հայաշատ քաղաքը: Հոն հաստատուած ընտանիքները գլխաւորաբար Ջուղայեցիներ, կեսարացիներ, անկիւրացիներ, պոլսեցիներ եւ կարնեցիներ էին, մասամբ նաեւ ուրֆացիներ եւ հալցիներ:

Վենետիկի մէջ կեդրոնացած ընտանիքները գլխաւորաբար հայկական առեւտրական տուններու ներկայացուցիչներ էին. անոնց մէջ կային առեւտարի միջնորդներ եւ իտալացիներու ու պարսիկներու, արաբներու ու թուրքերու միջեւ առեւտուրի յանձնակատարները:

Հայ ընտանիքներու ներկայացուցիչները ընդհանրապէս հմտացած էին արեւմտեան առեւտրական կեանքի չափանիշներուն, ծանօթ էին երկու - երեք կամ աւելի լեզուներու, եւ շնորհիւ իրենց բանակցելու կարողութեան եւ կենցաղագիտութեան կարեւոր եւ փնտուռած զբրակատարները դարձան մէկ կողմէ թրքական եւ պարսկական կառավարութիւններուն եւ միւս կողմէ՝ եւրոպացիներուն մօտ:

Վենետիկի կառավարութիւնը, քաղաքի բնակչութեան համար հայ առեւտրականները՝ որպէսզի իրենց գործունէութիւնը Վենետիկի մէջ կեդրոնացընեն, շատ մը առանձնաշնորհումներ տուաւ անոնց: Վենետիկի իշխանութիւնը հետաքրքրուած էր, որ հայերը, փոխանակ Լիվոնոյի կամ Ճենովայի, Վենետիկի մէջ բնակուեցին հաստատուն: Ժ.Չ. դարուն սկիզբը Վենետիկի կառավարութիւնը քաղաքացիութիւնը շնորհեց հայերուն, 1552ին որդեգրուած օրէնքի մը համաձայն, որուն հիմամբ Վենետիկի մէջ բանահինգ տարիէ ի վեր բնակութիւն հաստատած ոեւէ անձ իրաւունք ունէր քաղաքացիութիւն ստանալու: Վենետիկեան օրէնքի համաձայն, միայն քաղաքացիութիւն ունեցող անձեր կրնային կալուածներ գնել եւ հողատէր դառնալ:

ՀԱՅ ՆԱԽԱՏԵՐԵՐ ԵՒ ԾՈՎԱԿԱԿԱՆՆԵՐ

Վենետիկ հաստատուած հայ ընտանիքներէն ոմանք նաեւ նաւատէրեր դարձան. այսպէս, Եւստիւսիները տէր դարձան «Սանթա Գորոն» եւ «Մատոննա տելլա Գորոն» նաւերուն: Մանթ

ընտանիքին սեփականութիւնն էր «Սփիրիթօ Սանթօ» նաւը: Պօղոս Աւրան սեփականատէն էր «Սանթա Ճիուսեփէ» նաւը: Պետրոս Սինանի սեփականութիւնն էր «Սանթա Ճիորճիօ» մարտանաւը, իսկ Առաքել Գիորաքեանի կը պատկանէր «Մատոննա տելլա Փաչէ» նաւը:

Կային նաեւ անուանի հայ ծովակալներ. անոնցմէ աւելի ուշ ժամանակներու յիշուած են Ճիովանի Պեռնարտինէ (Bernardine) եւ Ճիովանի Ալիքերտինի (Aperdini): Ալիքերտինի մասին յիշատակութեան պահուած է 1743ի տարադրութիւններուն մէջ, ուր կ'ըսուի որ երբ Վենետիկի կառավարութիւնը որոշեց Նափոլիի ծովափէն աւազ փոխադրել Վենետիկ, նաւահանգիստին մօտակայքը ջրացներ կառուցելու համար, միայն Ալիքերտինի պարտականութիւն ստանձնեց տեղափոխելու աւազը:

ՎԵՆԵՏԻԿԻ ՀԱՅԵՐՈՒՆ ՀԱՄԱՇՈՒՄԸ ԱՊՐԵՆԱԿԵՐՊԸ

Վենետիկի մէջ կեդրոնացած հայերը մեծամասնութեամբ բարեկեցիկ ու հարուստ ընտանիքներ էին, բոլորն ալ կապուած էին իրարու եւ համախումբ ու համբարաշխ կ'ապրէին: Անոնց մօտ սովորութիւն դարձած էր՝ հաւաքներ կազմակերպել մէկուրեւ կամ միւսին տունը եւ կամ



Վենետիկ՝ քրանցքներու եւ կոնտուլներու քաղաք

Հայկական տան մէջ, երբեմն նաեւ Սուրբ Մարիամ Ողորտիկ եկեղեցոյ լայնատարած հրապարակին վրայ: Այսպէսով, բոլոր համայնքը համախմբուած կ'ուտէին, կը խմէին, կ'երգէին ու կը պարէին: Այսպիսի խնձորներու համար լաւագոյն առիթներ էին յատկապէս մկրտութիւնները, հարսանիքները, տարեդարձները եւ եկեղեցական տօները: Բոլոր կիներն ու աղջիկները հայկական տեսակ - տեսակ ճաշեր կը պատրաստէին. այդ ճաշերու պատրաստութեան եղանակը կը փոխանցուէր սերունդէ սերունդ:

Սուրբ Մարկոսի եւ Աստուածայայտութեան տօնին, Յունուար Յին, ընտանիքներ, հարազատներ ու մօտիկ բարեկամներ կը խմբուէին ճոխ սեղաններու շուրջ. պատրաստուած կ'ըլլային ոսպ, խաղողի տերեւով փաթեցուած տոլմայ, տարբեր տեսակի թացանքներ, կաթնախիւսեր, բրինձով լեցուած հնդկահաւ, արեւելեան հաց, խորոված եւ վրան թեթեւօրէն քացացով օժուած խոյ, հայկական տեսակաւոր քաղցրաւենիներ, չիր, անուշապուր եւ դարին (խմորով թխուած), որոնցմէ մէկուն խմորին մէջ կը պահուէր ոսկեղրամ մը, եւ որուն որ ելլէր անիկա, բախտաւոր կը նկատուէր:

Ձատկուած տօնին կը պատրաստէին խորոված գառնուկ, բարակ ձուածեղ, չորեկ, նուշ եւ տարբեր գոյներով ներկուած հաւկիթներ: Համբարձման տօնին, եթէ եղանակը բարենպաստ ըլլար, պտոյտ կը կազմակերպէին եւ բնութեան ծոցին կը վայելէին պանիրով ձուածեղ, խաշուած ձուկ, ընկուիթ թացանքով ու վարդաշուրով պատրաստուած թրթիլիներ: Աստուածածնի տօնին կը պատրաստէին հաւ, խորոված սոխ եւ կասիայով անուշեղէն, որմէ ետք կ'ուտէին եկեղեցիէն բերուած օրհնուած խաղողը:



Սուրբ Մարկոսի տաճարը եւ հրապարակը

ձի երկարող գօտիին մէջ բնակութիւն հաստատեցին եւ վաճառատուներ բացին: Այս շրջանը մեծ թիւով Ջուղայեցիներով բնակուած ըլլալուն պատճառով վենետիկցիներէն կոչուեցաւ Ճուլեֆֆա (Giuffa):

Ճուլեֆֆա թաղամասը, իր աւելի քան հարիւր հայ ընտանիքներով, անոնց բազմաշարք վաճառատուներով ու խանութներով դարձաւ Վենետիկի բարեկարգ ու հարուստ թաղամասերէն: Խանութներուն կամ վաճառատուներուն վերեւ յաճախ անոնց տէրերուն բնակարաններն էին եւ կամ արժէքաւոր ապրանքներու պահեստարանները: Կային նաեւ հայ լուծաբաններ, ինչպէս նաեւ՝ հայկական ապահովագրական դրամատուն: Ճուլեֆֆա թաղամասէն ժամանակի ընթացքին հայեր տարածուեցան դէպի յարակից Սուրբ Յովհաննէս Նոր թաղամաս:

Ճուլեֆֆա հաստատուած հայ վաճառականներէն շատեր Արեւելքէն կը ներածէին բուրդ, բամբակ, մետաքս եւ վուշ, որոնք կ'որոգէին Վենետիկի շուկաները: Այդ ապրանքները Վենետիկի հիւսուածեղէնի ճարտարարուեստին հում նիւթը կը կազմէին: Վենետիկցի վաճառականներ կը գնէին այդ ապրանքները եւ գանոնք կը վաճառէին գործարաններուն: Կային նաեւ ներկանիւթի առեւտուրով զբաղող հայ եւ տեղացի վաճառականներ: Ներկանիւթի առեւտուրի մէջ մասնագիտացած էին մանաւանդ Սարգիսեանները, որոնք յատկապէս եկեղեցիներու մէջ սրբանկարներու պատրաստութեան համար գործածուող ներկանիւթ կը հայթայթէին: Սարգիսեաններուն գաւակը՝ Ասքար ներկանիւթ կը հայթայթէր Վենետիկի ջրանցքներուն վրայ երթեալ եկող նաւակներուն՝ կոնտուլներուն ծածկոցները ներկող կալլէ Տելլէ Ռասսէի ներկարար արհեստաւորներուն: Նշենք, որ Վենետիկի ջրանցքներուն վրայ այդ ժամանակ կ'իթեւեկէին մօտաւորապէս երեք հազար կոնտուլներ: Հայ վաճառականներ կ'ապահովէին նաեւ Սուրբ Մարկոսի սպակիներուն համար նախատեսուած գոյները:

ՄԵԾԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐ ՎԵՆԵՏԻԿԻ ՄԵՋ

Վենետիկ հաստատուած հայ վաճառականներուն մէջէն յատկապէս Մեջբերմի հռչակաւոր արձաւ իբրեւ բարձր դասակարգի ազնուականներուն հետ գործակցող առեւտրական, որուն մեծ վաճառատունը մասնագիտացաւ լոյնուական կիներու վերաբերեալ առեւտուրին էջ: Հոնկէ գնումներ կ'ընէին նաեւ պալատաւոր կիներ: Վաճառատան մէջ կը վաճառուէին անկարժէք գորգեր, շքեղորէն ասեղնագործած կերպասէ վարագոյրներ՝ պատուհաններուն անկողիններու համար, դամասկեան փայլուն աղկազարդ ոսկեգօծ հագուստներ, բոսորաոյն կերպասէ շրջագետներ, ժանեկաւոր արտիքներ, արծաթաթիւ վերնաշապիկներ,



Կոնտուլներ Վենետիկի մէջ քրանցքի վրայ

ՕՐԱՏԵՏՐ

ՀԱՍՆԵՍՐՈՒՄ / ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ / ԵՐԳ

ՏՕՆԱԿԱՆ ՆՈՒԷՐՆԵՐ ՀԱՄԱՔԱԿԱՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍՆԵՐՈՒ ՄԷՋ

Տօնական այս օրերուն յաճախող էք նոր Տարւան եւ Ս. Մննդեան նիւթերով կազմակերպուող մշակութային նախաձեռնութիւնները: Այս սինակով տեղ կու տանք նոյն ծիրին մէջ կազմակերպուող քանի մը ցուցահանդէսներու:

Վր: Կը ցուցադրուին անոնց փոքր չափի եւ մատչելի գիներով ստեղծագործութիւնները, որոնք յարմար են ծառայելու իբրեւ տօնական օրերու նուէր: «Էքսփօ տը Նոնի» ցուցահանդէսը կարելի է այցելել առաւօտեան ժամը 11:00էն մինչեւ երեկոյեան ժամը 7:00:


«ԷՔՍՓՕ ՏԵ ՆՈՒԷ»
Մինչեւ 24 Դեկտեմբեր «Ռոզէն» արուեստի ցուցարարահին մէջ տեղի ունեցող այս հաւաքական ցուցահանդէսը կը համախմբէ իբրեւ նախնի գեղանկարիչներու եւ յարմար ման արուեստագէտներու խումբ

«ԷՔՍՓՕ ՏԵ ՅԵՆ ՏԱՆԵԷ»
Տարեկերջի տօներուն առիթով յարուեստագէտներ կը ներկայացնեն իրենց այն ստեղծագործութիւնները, զորս կարելի է օգտագործել իբրեւ նուէր: Ցուցադրութիւնը կը տեղադրուի 29 Դեկտեմբերէն մինչեւ 30 Դեկտեմբերը:

«ԼԷ ԶԱՐԹԻՍՕ ՏԻԻ ՏԻՄԱՆՇ»
Դարձեալ տօնական օրերուն առիթով կազմակերպուող այլ ցուցահանդէս մըն է այս, որ իր շուրջ կը համախմբէ սիրողական մակարդակի արուեստագէտներու խումբ մը: Ինչպէս խորագիրը ցոյց կու տայ, ցուցահանդէսը կը ներկայացնէ արուեստագէտներուն ապառ ծամերուն ստեղծագործութիւնները: «ԼԷ Կ'արթիսօ տիւ տիմանշ», որ տեղի կ'ունենայ «Ձաման» ցուցարարին մէջ, կը շարունակուի մինչեւ 30 Դեկտեմբերը:

ԱՅՍՕՐ

- Երգահանդէս «Քերթը պայ բենուլլայ» Լիբանանի Ազգային Օփերայի ելոյթ, «Քազիօ Տի Լիպան», ժամը 19:30ին:
- Նուագահանդէս Ս. Մննդեան ելոյթ, «Օրիան Է օրսիտան» նուագախումբի ելոյթ, «ՆՈՒՆԵՍՔՕ», ժամը 18:00ին:
- Նկարչական ցուցահանդէս «Տը լա փենթիւր սեմփլուման», Սամիր Թապէթի գործերը, «Ալիս Մոդապոլայ» ցուցարար, մինչեւ 24 Դեկտեմբեր:
- Հաւաքական ցուցահանդէս «Մոփիլի տիգայն», «Էսփան Էս. Տէ.» ցուցարար, մինչեւ 24 Դեկտեմբեր:
- Նկարչական հաւաքական ցուցահանդէս «Կրանտ Է Ժեօն», «Ժանին Ռուպէյ» ցուցարար, մինչեւ 31 Դեկտեմբեր:
- Նկարչական հաւաքական ցուցահանդէս «Սըրտը» քանգարանի «Աշնանային սալոն» քանգարանին ցուցարարին մէջ, մինչեւ 17 Յունուար:
- Նկարչական ցուցահանդէս «Քիլլ պիթ», Քրիս Սերաֆին - Լէյնի գործերը, «Ֆրենկ» ցուցարար, մինչեւ 7 Յունուար:
- Թատրոն «Քամա ալ արտ, բազալիթա մին... ֆաուր», ժամը 20:30ին, «Քազիօ տի Լիպան», մինչեւ 29 Փետրուար:
- Լուսանկարչական ցուցահանդէս «Պարսելոն» զգացումներու քաղաք խորագիրով «Մերվանթէ» հիմնարկին մէջ, Մարտի փողոց մինչեւ 6 Յունուար, ժամը 13:00էն 20:00, բացի Կիրակի օրերէն:
- Նոր Տարուան ցուցահանդէս «Սարազ Պէկ» մէջ, մինչեւ 24 Դեկտեմբեր:
- Ձեռնային աշխատանքներու հաւաքական ցուցահանդէս «Արուեստագէտներու զբաղում» խորագիրով: «Էփրով Թարթիս տ'Ա» սրահին մէջ, մինչեւ 23 Դեկտեմբեր:
- Մանկական նկարչական հաւաքական ցուցահանդէս «Ռոշան» ցուցարարին մէջ, մինչեւ 24 Դեկտեմբեր:
- Նկարչական հաւաքական ցուցահանդէս «Սերունդէ Սերունդ» խորագիրով, «Ժանին Ռուպէյ» ցուցարարին մէջ, մինչեւ 31 Դեկտեմբեր:



bezdig_mezdig@hotmail.com

ՍԱԿԱՐԱՆ

Պէլրուֆ սակարանին մէջ օտար դրամահոյներու փակման սակագինները հետեւեալներն էին երէկ. Սուրիական թղթակի 28,60 - 28,85 լ.ն. Բուլղարական տինար 5115,00 - 5140,00 լ.ն. Զորդանանեան տինար 2121,00 - 2131,00 լ.ն. Պահրէյնեան տինար 3985,00 - 4010,00 լ.ն. Ա. Մ. Էմիրութեան տիրիամ 410,75 - 412,75 լ.ն. Բարբարեան ռիալ 413,75 - 415,75 լ.ն. Սէլուսական ռիալ 402,00 - 404,00 լ.ն. Օմանեան ռիալ 3895,00 - 3920,00 լ.ն. Եգիպտական կիւն 220,00 - 230,00 լ.ն. Անգլիական սթրլինգ 2660,00 - 2670,00 լ.ն. Զուրիգերիական ֆրանք 1200,00 - 1205,00 լ.ն. Թրքական լիրա 104,50 - 105,0 լ.ն. Կիպրական փաունտ 3175,00 - 3200,00 լ.ն. Ճափոնական հապար եէն 13,90 - 14,00 լ.ն. Ամերիկեան տոլար 1501,00 - 1515,00 լ.ն. Քանադական տոլար 1130,00 - 1135,00 լ.ն. Աւստրալիական տոլար 1108,00 - 1113,00 լ.ն. Եւրօ 1868,00 - 1878,00 լ.ն.

● ՈՍԿԻ
Անգլիական մէկ ոսկի 157,000 - 162,000 լ.ն.
Իրանեան մէկ ոսկի 142,500 - 147,500 լ.ն.
Օսմանեան մէկ ոսկի 131,500 - 136,500 լ.ն.
Մերքիսական փէսու 755,000 - 775,000 լ.ն.
Մէկ քիլոկրամ ձուլ ոսկի 19,715,500 - 19,915,000 լ.ն.
Մէկ օնս ոսկի 409,30 - 409,80 \$
Մէկ օնս արծաթ 5,68 - 5,70 \$

● Ամերիկեան տոլարի փոխանակման սակերը.
Եւրօ 1.2389 - 1.2393
Քանադական տոլար 1.3315 - 1.3320
Զուրիգերիական ֆրանք 1.2558 - 1.2563
Ճափոնական եէն 107.57 - 107.62
Մէկ սթրլինգ 1.7660 - 1.7664

Մէկ սթրլինգ 565 դրամ

● ՍՈՒԼԻՏԵՐԻ ԲԱԺՆԵԹՈՒՂԹԵՐ
Գինի Ա. ճշդում Գինի Բ. ճշդում
Ա. կարգ 4.21 4.28
Բ. կարգ 4.26 4.26

ԼՈՒՍԱՅԱՓՈՒ ԱԼԵՔՍԱՆԵԱՆ ՀԵՌ. 01-252852

ՄԱՍԼՈՒՅ ՏՈՐԱ

ՄԱՐԿԱՍՄԱՐ
Since 1948

Գաղափար ճաշ բարձրներու սպասարարութիւն
Թարմ բարձրներով պարզեղէն կարմիրներ
Թարմ կարմիրներ
ԿԱՍՏՈՒՆԻ ԿԱՐՄԱՐԱՐՈՒՄ

Հեռ. 01-26 52 65 / 26 10 23 / 26 18 62

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

ԳՐԻԳՈՐ ԾԵՐՆԷՋԵԱՆԻ մահուան քառասունըքն առիթով, հոգեհանգստեան պաշտօն կատարուի Կիրակի, 28 Դեկտեմբեր 2003, Նոր Ատանայի Ս. Աստուածածին եկեղեցու մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ԱՒԵՏԻՍ ԿՈՍՏԱՆԵԱՆԻ մահուան քառասունըքն առիթով եւ ՆՈՒԱՐԴ ԿՈՍՏԱՆԵԱՆԻ մահուան ժե. տարելիցին առիթով, հոգեհանգստեան պաշտօն կատարուի Կիրակի, 28 Դեկտեմբեր 2003, Հայաշէնի Ս. Յովհաննու-Կարապետ եկեղեցու մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ԳԼԽԱԴԻՐ ՄԱՐԿՈՍԵԱՆԻ մահուան քառասունըքն առիթով, հոգեհանգստեան պաշտօն կատարուի Կիրակի, 28 Դեկտեմբեր 2003, Էջրեֆիի Ս. Յակոբ եկեղեցու մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ԴԱԻԻԹ ՍԵՓԵԹԵԱՆԻ մահուան Ա. տարելիցին առիթով, հոգեհանգստեան պաշտօն կատարուի Կիրակի, 28 Դեկտեմբեր 2003, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ԽԱՉԲԱՌ ԹԻԻ 5622 Պատրաստեց՝ Տ.Ս. ԱՂԱԶԱՐԵԱՆ

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1											
2											
3											
4											
5											
6											
7											
8											
9											
10											
11											

- ՇՈՐԻՉՈՆԱԿԱՆ**
1. Կրակարանի եռոտանի - Յուլիանեան անական:
 2. Աշտուճ - Անջրդի տարածութիւն:
 3. Կանոն - Յուլիանեան:
 4. Փիլիսոփայ:
 5. Համարում - Հանքային համեմ:
 6. 100 մ2 - Լեզուով մը՝ այն - Հայաստանի քաղաքներէն:
 7. Իզական անուն - Ափրիկեան երկիր:
 8. Նախամարդ - Նոյն գիրերը - Ուղիղ կապոց:
 9. Յրանական քաղաք - Միամանթի ծննդավայրը - Արական անուն:
 10. Մովսէսի քաղաքներէն - Վաւերական:
 11. Կրակող գէնք:

ԹԻԻ 5621

ԽԱՉԲԱՌԻՆ

ԼՈՒԹՈՒՄԸ

1	Ս	Ա	Ք	Ն	Ո	Ւ	Կ	Ս	Ա	Ղ
2	Ա	Մ	Մ	Ա	Ի	Ս	Ս	Ս	Ի	Կ
3	Մ	Ա	Ք	Ո	Տ	Ս	Ս	Ա	Ղ	
4	Ի	Բ	Լ	Ա	Ք	Ա	Ղ	Ն	Շ	
5	Ք	Բ	Լ	Ա	Ք	Ա	Ղ	Ս	Ս	
6	Ք	Բ	Լ	Ա	Ք	Ա	Ղ	Ս	Ս	
7	Ա	Մ	Մ	Ա	Ի	Ս	Ս	Ս	Ի	
8	Լ	Բ	Տ	Ս	Ս	Ա	Ղ	Ս	Ս	
9	Ա	Ղ	Ա	Ք	Ո	Ս	Ս	Ա	Ղ	
10	Լ	Բ	Ի	Գ	Ո	Ն	Ա	Ղ	Ս	
11	Ի	Բ	Ս	Ս	Ս	Ս	Ա	Ղ	Ս	

☆ Ի՞նչ կ'ըսեն ԱՍՏՂԵՐԸ ☆

ԽՈՅ (21 Մարտին 20 Ապրիլ)
Այս տօնական օրով այնքան աշխատանք ունիք, որ պիտի չկարենաք մասնակցիլ գիշերային հանդիսութիւններուն: Ուրեմն մեկուսացէք, որպէսզի մարդիկ ձեզ փնտռելով չզբաղին:

ՅՈՒԼ (21 Ապրիլին 21 Մայիս)
Բարեկամներու հետ համախմբուեցէք՝ տօնելու համար Մնուդի «Ռեւելյոն»ը: Մէկ կողմ դրէք օրուան հոգերը եւ խնդրի սեղանին շուրջ գուարանացէք:

ԵՐԿՈՒՈՐԵԱԿ (22 Մայիսին 21 Յունիս)
Եթէ մասնաւոր հրաւեր մը չունիք այս տօնական երեկոյեան, ձեր ընտանիքին անդամներուն հետ գուարք եւ հանդարտ երեկոյ մը պարեցէք: Մի՛ մոռնաք պատրաստելու Կաղանդի նուէրները:

ԽԵՅԳԵՏԻՆ (22 Յունիսին 23 Յուլիս)
Ամուրի ըլլաք թէ ամուսնացած, այսօր պետք է վայելէք տօնական մթնոլորտը՝ ձեր տունը կամ ճաշարան հրաւիրելով խումբ մը բարեկամներ: Այս իրիկուն մտածեցէք միայն սիրոյ մասին:

ԱՌԻԻԾ (24 Յուլիսին 23 Օգոստոս)
Եթէ այս իրիկուն «Ռեւելյոն»ի երեկոյ մը պիտի կազմակերպէք, ըսէք ձեզի հարազատ հրաւիրեալներուն, որպէսզի օգնեն օրուան պատրաստութեան: Դուք առանձին պիտի չկարենաք գլուխ հանել այդքան աշխատանք:

ԿՈՅՍ (24 Օգոստոսին 23 Սեպտեմբեր)
Այսօր գրեզած պիտի ըլլաք ձեր գաւակներուն նուէրներուն պատրաստութեամբ: Անոնք պիտի օգնեն ձեզի ուրախութեամբ: Ըրէք այնպէս, որ ձեր նուէրները յարմար ըլլան անոնց ճաշակին:

ԿՇԻՌՔ (24 Սեպտեմբերին 23 Հոկտեմբեր)
Բարեբախտաբար այսօր շատ անելի ուրախ պիտի ըլլաք, քան՝ նախորդ օրերը: Ամէն կողմէ պիտի փնտռուիք, որովհետեւ հանդիսակատար էք եւ միշտ ժպտուն:

ԿԱՐԻՃ (24 Հոկտեմբերին 23 Նոյեմբեր)
Այսօր կատարեալ տօնական մթնոլորտի մէջ պիտի մնաք, ձեր մօտ պիտի հրաւիրէք ձեզի մօտիկ անձեր միասնաբար գուարք երեկոյ մը անցընելու:

ԱՂԵՂՆԱԻՈՐ (24 Նոյեմբերին 21 Դեկտեմբեր)
Մասնագէտն էք ոգելից ըմպելիներու ընտրութեան: Այսօր ամէն ջանք ի գործ դրէք, որպէսզի հանելի «Ռեւելյոն» մը անցընէք: Սակայն մեծ ծախսեր ընելէ խուսափեցէք:

ԱՅՄԵՂՋԻԻՐ (22 Դեկտեմբերին 20 Յունուար)
Հանելի երեկոյ մը ձեզ կը սպասէ, ձեր սիրտը ուրախութեամբ պիտի լեցուի: Այս երեկուն անցընելի պիտի մնայ եւ յիշատակելի՝ ձեր մտքին ու հոգիին մէջ:

ՄՈՎԱՆՈՅՇ (21 Յունուարին 19 Փետրուար)
Կարգ մը արգելքներ պիտի ցցուին ձեր դիմաց եւ պիտի արգիլեն տօնական այս երեկուն վայելելու ձեր ճաշակին համեմատ: Այսուհանդերձ մի՛ յուսահատիք, առիթ մը պիտի բացուի ձեր դիմաց մոռնալու օրուան տագնապը:

ՉՈՒԿ (20 Փետրուարին 20 Մարտ)
Պատրաստ պիտի ըլլաք սիրով ընդունելու Ս. Մնուդի երեկոյեան սեղանը պատրաստելու: Ձեզ պիտի գնահատեն համեղ ճաշեր հիւրասիրելու համար:

ՕԴԵՐԵՆՈՅԹ

ԶՈՐԵԸՇԱԲԹԻ, 24 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2003
ՊԵՅՐՈՒԹ
ՄԱՍՍԱԲ ԱՄՊՈՏ
ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆ
ՑԵՐԵԿ՝ 19°C
ԳԻՇԵՐ՝ 13°C
ԽՈՆԱՌՈՒԹԻՒՆ՝ 63%

ԱԶԳԱԿ 50 ՏԱՐԻ ԱՌԱՋ 24 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1953

ՆԿԱՐԻՉ ՄԻՆԱՍԵԱՆԻ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԸ ՓԱՐԻՉԻ ՄԷՋ

- «Ցառաջ» (17 Դեկտեմբեր) կը գրէ. Ուրբաք եւ Շաբաք կեսօրէն ետք տեղի ունեցան պարսկահայ ծանօթ նկարիչ Յ. Մինասեանի ցուցահանդէսին բացման հանդիսութիւնները, առաջինը՝ վերապահուած մամուլին: «Ցառաջ»ի մէջ արդէն բարգամանած էինք Մաքսիմիլիէն Կոթիէի յառաջաբանը, ուր ծանօթ քննադատ ձեռնհասօրէն կը խօսէր Մինասեանի արուեստին մասին:
- Առաջին օրէն իսկ արուեստասէր հասարակութիւնը համակրանքով կ'ողջունէր Մինասեանի ստեղծագործութիւնները:
- Ճշմարիտ արուեստագէտի եւ ուժեղ խոնուածքի տէր՝ Մինասեանի գործերը անկեղծ են, տպաւորիչ եւ հարուստ գոյներով ներդաշնակուած:
- Առաջին առիթով իսկ «Յիկարօ» կը գրէ Վառնոյի ստորագրութեամբ. «... Յիսուս կտաւները, զորս ցուցադրած է, կրօնական տեսարաններ, բնականորէն մեմուաւանդ քոմփոզիտիւններ՝ յաճախ վերացական, կը ներկայացնեն հրապուիրչ գոյներու ներդաշնակութիւն մը եւ կ'արտայայտեն նկարիչին արժանիքները»:
- ՈՐՔԱՆ ՀԱՅԵՐԵՆ ՉԵՈՒԳԻՐ ԿԱՅ ԱՇԽԱՐՀԻ ՄԷՋ**
- Ըստ հայր ներսէս Ակիմեանի, ահա հայերէն ձեռագիրներու ընդհանուր թիւը.
- 1) Երեւան 9300
 - 2) Երուսաղէմ՝ Ս. Յակոբեանց Մատենադարան 3700
 - 3) Վենետիկ՝ Միխայիլեան Մատենադարան 3000
 - 4) Վիեննա՝ Միխայիլեան Մատենադարան 1500
 - 5) Պէլրուս՝ Ջովանոյի Մատենադարան 800
 - 6) Անթիլիաս, Հալէպ, Կիպրոս 350
 - 7) Պոլիս 300
 - 8) Հոնոմ, Վատիկան, Միլան 500
 - 9) Փարիզ 400
 - 10) Լոնտոն, Օքսֆորտ, Մանչեսթըր 400
 - 11) Պերլին, Լեմպերկ, Միլանիս 450
 - 12) Հոլանտա, Ռուսմանիա, Հունգարիա, Եգիպտոս 450
 - 13) Թարիզ, Թեհրան, Նոր Զուրա 800
 - 14) Լեյնիկրատ, Թիֆլիս 300
 - 15) Ամերիկա 500
- Գումար՝ 22,750

ԱՅՍՕՐ 24 ԴԵԿՏԵՄԲԵՐԻՆ

- 1868.- Սահ Հայր Արտն Բագրատունցի, Վենետիկի Միխայիլեանցի, քանաստեղծ, հեղինակ «Հայկ Դիցագոն»ի:
- 1911.- Սահ Անճոյն հայոց կաթողիկոս Մատթոս Իգմիլեանցի:

ԿԻՊՐԱԿԱՆ ԸՆԹՐ

ՏԵՆՔԹԱՇ ԿՈՉ ԿՈՒՂՂԷ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ

ՆԻԿՈՍԻԱ, 23 (ԱՅՓ).- Թուրք կիպրացի ղեկավար Ռաուֆ Տենքթաշ կոչ ուղղեց նախապատրաստական բանակցություններու յոյն կիպրացիներուն հետ՝ ՄԱԿի առաջարկած վերամիացման ծրագրին պաշտօնական բանակցություններուն վերսկսելի առաջ:

Տենքթաշ, որ կը խօսէր Նիկոսիոյ թրքական բաժինին մէջ, դիտել տուաւ որ թուրք կիպրացիները փախուստ չեն տար բանակցություններէն, բայցեւայնպէս անուղղակի հանդիպումները անհրաժեշտ են, որովհետեւ եթէ անոնք տեղի չունենան, կարելի պիտի չըլլայ քննարկել ՄԱԿի ծրագիրը:

Տենքթաշի յայտարարութիւնը ենթադրել կու տայ, որ թուրք կիպրացի ղեկավարը մեղմացուցած է կեցուածքը ՄԱԿի ծրագրին հանդէպ: Նախապէս ան վերջնականապէս կը մերժէր յիշեալ ծրագիրն ու անոր պայմանները:

Կիպրացիները պէտք է շուտով լուծեն իրենց հարցերը, որովհետեւ Եւրոպական Միութիւնը Մայիսին պաշտօնապէս պիտի ընդունի կիպրոսի անդամակցութիւնը: Եթէ մինչ այդ կիպրոս վերամիացած չըլլայ, Ե. Միութեան անդամ պիտի չըլլայ միայն յունական կիպրոսը, որ միջազգային ճանաչում ունի:

ՄՈՍԿՈՒԱ ՊԱՏՐԱՍ Է ՋՆՁԵԼՈՒ ԻՐԱՔԻ ՊԱՐՏՔԻՆ ԵՐԿՈՒ ԵՐՐՈՐԴԸ, ՊԱՅՄԱՆԱՒ ՈՐ...

ՄՈՍԿՈՒԱ, 23 (ԱՅՓ).- Ռուսիոյ նախագահ Վլատիմիր Փութին իրաքի ղեկավարներու փոխանցած է, թէ Մոսկուա պատրաստ է ջնջելու իրաքի պարտքին երկու երրորդը, պայմանաւ որ ռուսական ընկերութիւններ իրենց բաժինը ունենան իրաքի վերաշինութեան ծրագիրներու պայմանագրութիւններուն մէջ:

Կրեմլինի բարձրաստիճան պաշտօնատար մը ըսաւ, որ Փութին Մոսկուայի այս կեցուածքը փոխանցած է իրաքի իշխող խորհուրդը ներկայացնող պատուիրակութեան մը, որ Ռուսիա այցելած էր Երկուշաբթի օր՝ բանակցություններ կատարելու համար: Պաշտօնատարը աւելցուց սակայն որ Մոսկուա տակաւին վերջնականապէս չէ որոշած կրճատուելիք գումարը, որ ըստ իրաքի պաշտօնատարներու պարտքին 65 առ հարիւրն է: Պաշտօնատարը դիտել տուաւ, որ Մոսկուա պատրաստակամութիւն յայտնած է, սակայն ցարդ որոշում չէ տուած:

Իրաք աւելի քան տասը միլիարդ տոյար պարտական է Ռուսիոյ:

ԼԱՉԱԿԻ ԳՈՐԾԱԾՈՒԹԵԱՆ ՀԱՐՑՈՎ

ԽԱԹԵՄԻ ՇԻՐԱՔԷՆ ԿԸ ՊԱՀԱՆՁԷ ՉՆՁԵԼ «ՄԻԱԼ ՈՐՈՇՈՒՄԸ»

ԹԵՂԵՐԱՆ, 23 (ԱՅՓ).- Իրանի նախագահ Մոհամէտ Խաթեմի Ֆրանսայի կառավարութեան պահանջեց ջնջել նախագահ Ժաք Շիրաքի «սխալ որոշումը», որ կ'արգիլէ իսլամական լաչակին գործածութիւնը դարձնելու մէջ:

Խաթեմի մարտնչ, որ պատուութեան, հաւասարութեան եւ եղբայրութեան շատագով Ֆրանսան ջնջէ այս սխալ որոշումը, որ կը հակադրուի իր սկզբունքներուն: Խաթեմի շեշտեց, որ հիճապը (լաչակը) կրօնական անհրաժեշտութիւն է եւ զայն արգիլելը համապօր է ծայրայեղ սպալանաւորութեան:

ԿԱՐԳ ԼՈՒՐԵՐ

- ՄՈՍԿՈՒԱ.- Ռուսիոյ նախագահ Վլատիմիր Փութին այսօր Ուքրանիոյ մէջ տեսակցութիւն պիտի ունենայ նախագահ Լեոնիտ Քուչմայի հետ, քննարկելու համար երկու երկիրներուն առնչուող հարցեր:
- ՊՈԼՒՍ.- Պոլսոյ ոստիկանութիւնը բռնագրբարւած է մեծ քանակութեամբ պայթուցիկ նիւթեր, որոնց գործածութեան պարագային կարելի էր սկսել հինգ մեծ բեռնակառքեր:
- ՄԱԿ.- ՄԱԿի Ապահովութեան խորհուրդը նոր վեցամսեայի մը համար երկարաձգեց ՄԱԿի ուժերուն ներկայութիւնը Կոչանի մէջ:
- ՄԱՆԻԱ.- Ֆիլիպինները հարուածած տեղատարափ անձրեւներուն պատճառած հողալի սահանքներուն զոհերուն թիւը բարձրացած է աւելի քան երեք հարիւրի: Փրկարար խմբակները ցարդ յաջողած են 37 հոգի ապստել:

ՊԱՂԵՍԻՆԵՒԻՍՐԱՅԵԼԵԱՆ ՏԱԳՆԱՊ

ՄԵՇ ՏԱՐՈՂՈՒԹԵԱՄԲ ԲԱՆՈՒՄՆԵՐԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻՆ



Ութ պաղեստինցիներ սպաննուեցան երէկ արեւածագէն առաջ, երբ իսրայէլեան ուժեր ներխուժեցին Կապալի հարաւային մէկ շրջանը: Ներխուժումը յաջորդած էր իսրայէլացի երկու սպաներու սպանութեան, որ տեղի ունեցած էր քանի մը ժամ առաջ, ձեռնառումներով յարձակումի մը ընթացքին:

Պաղեստինեան ապահովական եւ բժշկական աղբիւրներ հաղորդեցին, որ ութ պաղեստինցիներ սպաննուած են Ռաֆահ գաղթականային մէջ, իսրայէլեան ուժերուն հետ բախումի մը պահուն: Ըստ նոյն աղբիւրներուն, իսրայէլեան ուժերը Ռաֆահ մտած էին 15 ճիւղերով եւ վրահապատ փոխարկակառքերով: Բժշկական աղբիւրները աւելցուցին, որ ութ զոհերուն կողքին ինկած են աւելի քան 34 վիրատուներ, որոնց կարգին են երեք մանուկներ:

Իսրայէլեան պինտորական աղբիւրներ հաղորդեցին, որ զոհ ու վիրատուներ չեն տուած գործողութեան ընթացքին, որուն նպատակն էր քանդել ստորերկրեայ փապուղիներ, որոնք Կապան կը միացնեն Եգիպտոսի եւ որոնց միջոցով պաղեստինցիներ փնջ կը մաքսանեն գէն դէպի Կապա: Բանքեր մը յայտնեց, որ այդպիսի անցք մը գտնուած է եռայարկանի շէնքի մը տակ: Ան աւելցուց, որ յիշեալ փապուղին պիտի քանդուի: Բանքերը դիտել տուաւ նաեւ, որ անցքին բացայայտումը փաստեւ, որ ծայրայեղականները կ'օգտագործեն քաղաքային ենթակառուցուէրը եւ քաղաքայինները հետքերէն ծրագրիներու մէջ: Այլ պինտորական մը յարձակումը փորձեց արդարացնել, դիտել տայով, որ իսրայէլացի պինտուները բազմիցս յարձակումի ենթարկուած են այս շրջանին մէջ եւ թէ անոնք պարտաւորուած են հակադարձելու: Վերջերս, Ռաֆահ իսրայէլեան քանի մը ներխուժումի ենթարկուած է:

Իսրայէլացի երկու սպաններ սպաննուած էին Քիստոյֆիմ անցքին մօտ, որ Իսրայէլը կը միացնէ Կուշ Բաթիֆ բնակեցման վայրին: Ըստ իսրայէլեան աղբիւրներուն, պաղեստինցի պինտուներ կրակ բացած են պինտուներուն վրայ՝ սպաննելով երկու հոգի:

Պաղեստինցի ականատեսներ յայտնեցին, որ «Աքսայի Նահատակներու Փաղանգները» ստանձնեցին յարձակումի պատասխանատուութիւնը: Միւս կողմէ, իսրայէլացի պաշտօնատարները յայտնեցին, որ Օննիեան տօնը Բեթղեհէմի մէջ անցրուել փափաքող հաւատացեալներուն ու վրօսաշրջիկներուն համար պիտի վերցուին կարգ մը անցարգելներ՝ դիրքացնելու համար անոնց մուտքը Բեթղեհէմ: Բեթղեհէմ ներկայիս կը գտնուի պաղեստինեան հակակշիռի տակ, սակայն անոր հասցնող կարգ մը ձմաբաններ իսրայէլեան հակակշիռի ենթակալ են:

ՄԱԸՐ ԸԱՍՏԱՏ ԿԸ ՄԱՆՑ ԵԳԻՊՏՈՍԻ ԽԱՂԱՂԱՐԱՐ ԴԵՐԻՆ ԿՐԱՅ

Եգիպտոսի արտաքին գործոց նախարար Սիմէտ Մահէր, որ Երկուշաբթի օր յարձակումի ենթարկուած էր ծայրայեղական պաղեստինցիներու կողմէ, Երուսաղէմի Աքսա մզկիթի համայնքին մէջ, երէկ յայտարարեց, որ միջադէպը պիտի չարգելակէ Գահիրէի խաղաղարար միջնորդի առաքելութիւնը, որուն նպատակն է արագացնել պաղեստինցիներուն եւ իսրայէլացիներուն խաղաղութեան բանակցություններուն սեղան վերադարձը եւ համաձայնագրի մը ստորագրությունը:

Մահէր, որ յարձակումէն քանի մը ժամ ետք Գահիրէ վերադարձած էր, շեշտեց, որ խուճ մը պաղեստինցիներու արարքը պիտի ամրապնդէ ու յօրացնէ Եգիպտոսի կեցուածքը եւ թափ պիտի տայ խաղաղութեան բանակցություններուն վերսկսելու անոր ճիգերուն: Մահէր աւելցուց, որ Եգիպտոս պատասխանատու չի նկատեր բոլոր պաղեստինցիները:

Ականատեսներ յայտնած էին, որ խուճ մը պաղեստինցիներ կօշիկներ նետած էին Մահէրի վրայ՝ զայն «դաւաճան» անուանելով: Մահէր քանի մը ժամ հիւանդանոց մնալէ ետք, վերադարձած էր Գահիրէ: Իսրայէլեան աղբիւրները հաղորդեցին, որ պաղեստինեան ոստիկանութիւնը ձեռքաւայած է հինգ կասկածելիներ, որոնք կրնան կապ ունեցած ըլլալ միջադէպին հետ:

Մահէրի դէմ յարձակումը դատաւարտուեցաւ Արաբական Լիկայի, Քուէյթի եւ այլ երկիրներու կողմէ: Պաղեստինեան իշխանութիւնը յարձակումը դատաւարտելէ ետք, որոշեց յառաջիկայ 48 ժամուան ընթացքին պատուիրակութիւն մը ուղարկել Գահիրէ՝ ներողութիւն խնդրելու համար: Կր նախատեսուի, որ պատուիրակութեան մաս կազմեն Ֆարուք Քատտունի, Նապիլ Շաաթ եւ Ժիպրիլ Ռաժուպ:

RÉSERVE DU COUVENT, DIGNE D'UN CHÂTEAU.

Couronnée par une médaille d'or aux Vinalies 2001, notre Réserve du Couvent est une fois de plus placée au premier plan par l'Union des Oenologues de France. Désormais, la Réserve est dor.

CHATEAU KSARA

ՔԱՆԻ ՄԸ...

Շարունակուած Յրդ Էջէն

● ԿԱՐՉԱՊԵՏ Ռաֆիք Հարիրի երէկ ընդունեց խորհրդարանի փոխ նախագահ Էլի Ֆըրվիլին, որուն հետ քննարկեց տեղական պարագայումները: Ան ընդունեց Պէյրութի փաստաբաններու սենտիքայի նախագահ Սելիմ Ռաթան, որ յայտնեց, թէ անհրաժեշտ է «քաղաքական անձնաւորութիւններու ձեռքը մէկդի դնել» դատական իշխանութիւններէն:

● ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄԻ Ազգային ճակատը երէկ հանդիպում մը ունեցաւ իր անդամներէն՝ երեսփոխան Պոթրոս Հարպի բնակարանին մէջ, ներկայութեամբ խորհրդարանի նախկին նախագահ Հիւսէյն Հիւսէյնի եւ նախկին վարչապետներ Սելիմ Հըպի եւ Օմար Քարամէի եւ երեսփոխան Ծայր Մուսուատի: Ճակատը որոշեց կառավարութեան ներկայացնել հարցաքննություններ մը բջիջային հեռաձայնի եւ փոստ-թղթային թղթածրարներուն հարցով: Ճակատը նկատել տուաւ նաեւ, որ կառավարութիւնը «իրաւիքները» լքողութիւն մտածելու Լիբանանեան Համալսարանի տազնապին վերջնական լուծումն շուրջ:

In Love with tapifama®

- Գորգին մեթրը՝ 7 տոլարէն սկսեալ
- Պիլծիբական բուրդով գորգին մեթրը՝ 15 տոլարէն սկսեալ
- Չիմական գորգին մեթրը՝ 25 տոլարէն սկսեալ
- Պարսկական գորգին մեթրը՝ 45 տոլարէն սկսեալ
- Մոքթ (զետեղումով) մեթրը՝ 3 տոլարէն սկսեալ

ՓԱՐԷԷ 15 տարուան ամբողջական երաշխաւորութեամբ

ՄԱՍՆԱԿՃԱՐՈՎ, ԱՈԱՆՑ ՏՈԿՈՍԻ ԵՒ ԿԱՆԽԱԿՃԱՐԻ

Պուրճ համուտ, Անթիլիաս, Պատարօ, Սարպա, Թրիփոլի, Ֆօպուր Թրիփոլի, Տրակպոր Բորայթեմ Դեռ: 09-640179 եւ 03-490555